Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը Հայաստանի Հանրապետության և Եվրոպական ներդրումային բանկի միջև Հայաստանի Հանրապետության և Եվրոպական ներդրումային բանկի միջև «Երևանի էներգաարդյունավետության երկրորդ ծրագիր» ներդրումային դրամաշնորհային համաձայնագրի հայերեն պաշտոնական թարգմանությունն է:

**Հայաստանի Հանրապետության**
**արտաքին գործերի նախարարություն**

| Corporate Use

Պայմանագրի համարը (FI թիվ) 96161

Գործողության համարը (Serapis թիվ) 2018-0581

# ԵՐԵՎԱՆԻ ԷՆԵՐԳԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ II ՓՈՒԼԻ ԾՐԱԳԻՐ

# ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

*եւ*

**ԵՎՐՈՊԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԲԱՆԿԻ**

**միջեւ**

Երեւան, նոյեմբերի 12, 2024թ.

Լյուքսեմբուրգ, նոյեմբերի 12, 2024թ.

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

*ՀՈԴՎԱԾ 1.* 9
***Սահմանումներն ու մեկնաբանումը*** 9
*ՀՈԴՎԱԾ 2.* 18
***Առարկան*** 18
*ՀՈԴՎԱԾ 3.* 23
***Ուժի մեջ մտնելը եւ գործողության ժամկետը*** 23
*ՀՈԴՎԱԾ 4.* 24
***Աշխատանքների ֆինանսավորումը*** 24
*ՀՈԴՎԱԾ 5.* 25
***Նախագծումը եւ գնումները*** 25
*ՀՈԴՎԱԾ 6.* 25
***Պայմանագրերի փոփոխումը*** 25
*ՀՈԴՎԱԾ 7.* 27
***Դրամաշնորհի վճարումը*** 27
*ՀՈԴՎԱԾ 8.* 34
***Թույլատրելի ծախսերը*** 34
*ՀՈԴՎԱԾ 9.* 38
***Տեղեկատվություն եւ հաշվետվություններ ներկայացնելը*** 38
*ՀՈԴՎԱԾ 10.* 45
***Արդյունքների նկատմամբ իրավունքները եւ մտավոր սեփականության իրավունքները*** 45
*ՀՈԴՎԱԾ 11.* 47
***Տեսանելիությունը եւ թափանցիկությունը*** 47
*Հոդված 12.* 51
***Շահերի բախումը*** 51
*ՀՈԴՎԱԾ 13.* 52
***Գաղտնիությունը*** 52
*ՀՈԴՎԱԾ 14.* 54
***Մոնիթորինգը եւ գնահատումը*** 54
*ՀՈԴՎԱԾ 15.* 54
***Ստուգումները, հսկողությունն ու աուդիտները*** 54
*ՀՈԴՎԱԾ 16.* 56
***Անձնական տվյալների պաշտպանությունը*** 56
*ՀՈԴՎԱԾ 17.* 57
***Բարեվարքության հանձնառությունը*** 57
*ՀՈԴՎԱԾ 18.* 61

*Անհաղթահարելի ուժի ազդեցությունը* ......61
*ՀՈԴՎԱԾ 19.* ......61
*Կասեցումը* ......61
*ՀՈԴՎԱԾ 20.* ......63
*Հետգանձումը* ......63
*ՀՈԴՎԱԾ 21.* ......65
*Փոփոխությունները* ......65
*ՀՈԴՎԱԾ 22.* ......65
*Իրավունքների փոխանցումը* ......65
*ՀՈԴՎԱԾ 23.* ......66
*Դադարեցումը* ......66
*ՀՈԴՎԱԾ 24.* ......68
*Գանձումները եւ ծախսերը* ......68
*ՀՈԴՎԱԾ 25.* ......69
*Պատասխանատվությունը եւ պաշտպանությունը* ......69
*ՀՈԴՎԱԾ 26.* ......70
*Ծանուցումները եւ այլ հաղորդումներ* ......70
*ՀՈԴՎԱԾ 27.* ......72
*Կարգավորող իրավունքը եւ վեճերի լուծումը* ......72
*ՀՈԴՎԱԾ 28.* ......75
*Իրավունքները պահպանելը* ......75
*ՀՈԴՎԱԾ 29.* ......75
*Ամբողջական համաձայնագիրը* ......75
*ՀՈԴՎԱԾ 30.* ......75
*Անվավերությունը* ......75
*ՀՈԴՎԱԾ 31.* ......76
*Անգլերեն լեզուն* ......76
*ՀՈԴՎԱԾ 32.* ......76
*Ուժի մեջ մտնելը* ......76
*Հավելված 1.* ......78
*Ծրագրի նկարագրությունը* ......78
*Հավելված 2.* ......81
*Ծրագրի գնահատված ծախսերը* ......81
*Հավելված 3.* ......82
*Վճարման պահանջագրի օրինակելի ձեւ* ......82
*Հավելված 4.* ......85

*Հաշվետվությունները* ........ *85*
*Հավելված 5.* ........ *87*
*Առաջընթացը բնորոշող ցուցանիշներ*........ *87*

## ՍՈՒՅՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ ԿՆՔՎԵԼ Է՝

Մի կողմից՝ **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ՝** ի դեմս նախարար պրն. Վահե Հովհաննիսյանի (**Դրամաշնորհի շահառու**),

եւ

մյուս կողմից՝ **ԵՎՐՈՊԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԲԱՆԿԻ՝** «Եվրոպական միության գործունեության մասին» պայմանագրով ստեղծված ֆինանսական հաստատություն, որի գլխամասը գտնվում է Լյուքսեմբուրգի Մեծ Դքսություն, Լյուքսեմբուրգ L-2950, Կոնրադ Ադենաուր բուլվար 100 հասցեում, որը պատշաճ կերպով ներկայացված է այդ նպատակով, (**Բանկ**)

միջեւ:

Յուրաքանչյուրն առանձին՝ **Կողմ**, իսկ միասին՝ **Կողմեր**.

ՔԱՆԻ ՈՐ՝

Ա. Դրամաշնորհի շահառուն հայտնել է, որ Երեւանի քաղաքապետարանը (Իրականացնող մարմին կամ Վերջնական շահառու), որը գործում է Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարության (ՏԿԵՆ) (Գլխավոր գործադիր մարմին կամ ՏԿԵՆ) ենթակայության տակ, ձեռնարկել է կայուն էներգաարդյունավետության բարելավման աշխատանքներին աջակցելու գործողություն, որի թիրախում Հայաստանում՝ Երեւանում տեղակայված՝ ընտրված հանրային շենքերն են (մանկապարտեզներն ու պոլիկլինիկաները) (այսուհետ՝ **Ծրագիր**), ինչպես ավելի մանրամասնորեն նկարագրված է սույն փաստաթղթի 1-ին հավելվածում շարադրված տեխնիկական նկարագրության մեջ (**Ծրագրի նկարագիր**):

Բ. Դրամաշնորհի շահառուն 2023 թվականի նոյեմբերի 29-ին կնքել է ֆինանսավորման պայմանագիր (**Ֆինանսավորման պայմանագիր**), եւ Բանկը Դրամաշնորհի շահառուին է տրամադրում առավելագույնը 25,000,000 (քսանհինգ միլիոն) եվրո մայր գումարի չափով վարկ (**Վարկ**)՝ Ծրագիրը ֆինանսավորելու համար: Ծրագրի շրջանակներում անհրաժեշտ նախաձեռնությունները հետագայում համաձայնեցվել են Իրականացնող մարմնի եւ Բանկի միջեւ կնքված՝ ծրագրի իրականացման համաձայնագրում (**Ծրագրի համաձայնագիր**):

Գ. Եվրոպայի հանրային ֆինանսական հաստատությունների, այդ թվում՝ Բանկի կողմից փոխհատուցման ենթակա հիմքով տրամադրված ֆինանսավորմանը զուգահեռ Եվրոպական միության ընդհանուր բյուջեից փոխհատուցման ոչ ենթակա հիմքով ֆինանսավորում տրամադրելու միջոցով Եվրոպական միության՝ ԵՄ հարեւանությամբ գտնվող գործընկեր երկրներին աջակցելու համար փոխառու միջոցների ներգրավման էֆեկտը բավարար չափով ապահովելու նպատակով ստեղծված՝ Եվրոպական միության ֆինանսավորման գործիքի՝ Հարեւանության ներդրումային հարթակի (**ՀՆՀ**) գործառնական խորհուրդը համաձայնել է Բանկի դիմումով փոխհատուցման ոչ ենթակա հիմքով ֆինանսավորում տրամադրել Ծրագրի ծախսերի մի մասը ծածկելու համար (**ՀՆՀ դրամաշնորհ**), որը պետք է օգտագործվի ԵՄ ընդհանուր բյուջեի միջոցով

հասանելի դարձած ներդրումային դրամաշնորհի տեսքով: ՀՆՀ դրամաշնորհի բաղկացուցիչ մասերն են՝

1) ներդրումային դրամաշնորհի տարր՝ առավելագույնը մինչեւ 10,100,000 (տասը միլիոն հարյուր հազար) եվրոյի չափով, որը նախատեսված է մասնակիորեն ֆինանսավորելու համար էներգաարդյունավետության բարելավմանը վերաբերող Ծրագիրը, որի թիրախում Հայաստանում՝ Երեւանում տեղակայված մանկապարտեզներն ու պոլիկլինիկաներն են, ինչպես ավելի մանրամասնորեն նկարագրված է Ծրագրի նկարագրում (**Դրամաշնորհ**). եւ

2) i) տեխնիկական աջակցության դրամաշնորհային տարր՝ ծրագրի ընդհանուր բարեհաջող իրականացումն ապահովելու համար, եւ ii) տարր, որը պատասխանատու է Ծրագրի հաղորդակցության եւ տեսանելիության բաղադրիչը ֆինանսավորելու համար:

Դ. Դրամաշնորհի շահառուն պատշաճ կերպով լիազորված է ստանալու Դրամաշնորհը, որը հատուկ կօգտագործվի սույն Համաձայնագրով ներկայացված Ծրագրի իրականացման համար՝ սույն Համաձայնագրում նախատեսված ժամկետներում եւ պայմաններով:

Ե. Դրամաշնորհի շահառուն Դրամաշնորհից ստացված միջոցները հասանելի է դարձնում Վերջնական շահառուին՝ համաձայն ենթաֆինանսավորման համաձայնագրի (Ենթաֆինանսավորման համաձայնագիր):

Զ. 2019 թվականի դեկտեմբերի 27-ին Բանկը եւ Եվրոպական միությունը՝ ի դեմս Եվրոպական հանձնաժողովի, Դրամաշնորհի կառավարման եւ իրականացման համար կնքել են օժանդակության համաձայնագիր (**Օժանդակության համաձայնագիր**) (փոփոխված 2023 թվականի մարտի 9-ին եւ 2024թ. հոկտեմբերի 21-ին):

Է. Սույն ներդրումային դրամաշնորհի համաձայնագիրը (**Համաձայնագիր**) կնքվել է՝ i) 2014 թվականի մայիսի 7-ին եւ 8-ին թվագրված Ֆինանսական եւ վարչական շրջանակային համաձայնագրի հիման վրա, որը կնքվել է Եվրոպական միության՝ ի դեմս Եվրոպական հանձնաժողովի, եւ Բանկի միջեւ եւ փոփոխվել է

2019 թվականի հոկտեմբերի 8-ին եւ 9-ին (**ՖՎԾՀ**), եւ ii) Օժանդակության համաձայնագրի հիման վրա:

Ը. Բանկը գտնում է, որ տեղեկատվության հասանելիությունն էական դեր է խաղում բնապահպանական եւ սոցիալական ռիսկերի, այդ թվում՝ մարդու իրավունքների խախտումների նվազեցման գործում, որոնք կապված են իր կողմից ֆինանսավորվող ծրագրերի հետ, եւ հետեւաբար հաստատել է իր թափանցիկության քաղաքականությունը, որի նպատակն է բարձրացնել Բանկի (եւ նրա դուստր ձեռնարկությունների) հաշվետվողականությունը իր շահագրգիռ կողմերի եւ ընդհանրապես Եվրոպական միության քաղաքացիների նկատմամբ:

Թ. Անձնական տվյալների մշակումն իրականացվում է Բանկի կողմից՝ համաձայն Եվրոպական միության՝ անձնական տվյալների մշակման առնչությամբ անհատների այդ տվյալների ազատ տեղաշարժի առնչությամբ ֆիզիկական անձանց պաշտպանության մասին գործող օրենսդրության: Բանկն աջակցում է փողերի լվացման եւ ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում միջազգային եւ ԵՄ չափանիշների կիրառմանը եւ խթանում է հարկային լավ կառավարման չափանիշները: Այն սահմանել է քաղաքականություն եւ ընթացակարգեր՝ խուսափելու համար կիրառելի օրենքների մասով անօրինական կամ չարաշահող բնույթի համարվող նպատակներով իր միջոցները ոչ նպատակային օգտագործելու վտանգից: Հարկային խարդախության, նախատեսված հարկերը չվճարելու, հարկերից խուսափելու, հարկային ագրեսիվ պլանավորման, փողերի լվացման եւ ահաբեկչության ֆինանսավորման վերաբերյալ Բանկի խմբի հայտարարությունը հասանելի է Բանկի կայքում եւ լրացուցիչ ուղեցույց է առաջարկում Բանկի պայմանագրային գործընկերներին[1]:

ՀԵՏԵՎԱԲԱՐ սույնով համաձայնություն է ձեռք բերվել հետեւյալի վերաբերյալ.

[1] http://www.eib.org/about/compliance/tax-good-governance/index.htm?f=search&media=search

# ՀՈԴՎԱԾ 1.

## Սահմանումներն ու մեկնաբանումը

1.1. Սույն Համաձայնագրում ցանկացած տեղ գործածվելիս հետեւյալ եզրույթներն ունեն իրենց դիմաց նշված իմաստները.

| | |
|---|---|
| **«Համաձայնագիր»** | եզրույթն ունի նախաբանի «Է» կետում դրան տրված իմաստը: |
| **«Լիազորություն»** | նշանակում է լիազորություն, թույլտվություն, համաձայնություն, հաստատում, որոշում, լիցենզիա, բացառում, ներկայացում, նոտարական վավերացում կամ գրանցում: |
| **«Գլխավոր գործադիր մարմին»** | եզրույթն ունի նախաբանի «Ա» կետում դրան տրված իմաստը: |
| **«Գաղտնի տեղեկատվություն»** | նշանակում է ցանկացած փաստաթուղթ, տեղեկություն կամ այլ նյութ, որը տրամադրվում է սույն Համաձայնագրի հետ կապված կամ դրա համաձայն, եւ որը հավաքականորեն, գրավոր կամ որեւէ այլ մշտական (այդ թվում՝ էլեկտրոնային) կրիչի վրա ամրագրված ձեւով եւ հստակ ու ակնհայտորեն սահմանվում է որպես «Գաղտնի տեղեկատվություն»: |
| **«Կապալառու»** | նշանակում է ֆիզիկական կամ իրավաբանական անձ կամ այդպիսի անձանց միավորում՝ պաշտոնական կամ ոչ պաշտոնական, որի հետ Վերջնական շահառուն Պայմանագիր է կնքում Աշխատանքները կատարելու համար: |
| **«Պայմանագիր»** | նշանակում է Վերջնական շահառուի եւ Կապալառուի միջեւ գնումների ընթացակարգի համաձայն կնքված համաձայնություն, ինչպես սահմանված է 5-րդ հոդվածում (*Նախագծումը եւ գնումները*), եւ որի համաձայն այդ Կապալառուն կատարում է Աշխատանքները: |
| **«Օժանդակության համաձայնագիր»** | եզրույթն ունի նախաբանի «Զ» կետում դրան տրված իմաստը: |
| **«Ծրագրի նկարագիր»** | եզրույթն ունի նախաբանի «Ա» կետում դրան տրված իմաստը: |
| **«Հատկացումների հաշվեհամար»** | նշանակում է եվրոյով հաշվեհամարը, որը՝<br>1) բացվել է Դրամաշնորհի շահառուի անունով,<br>2) Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում վարվող՝ միասնական գանձապետական հաշվեհամարի առանձին ենթահաշիվ է,<br>3) նախատեսված է Ծրագրի իրականացման համար:<br>Հատկացումների հաշվեհամարն առանձնացված է մյուս բոլոր հաշվեհամարներից, աուդիտի է ենթարկվում անկախ եւ առանձին ձեւով, եւ դրա նկատմամբ չի կարող իրականացվել հարկադիր կատարման, արգելադրման կամ համանման այլ վարույթ: |
| **«Ուժի մեջ մտնելու ամսաթիվ»** | եզրույթն ունի 32-րդ հոդվածում դրան տրված իմաստը: |
| **«ԵՆԲ բնապահպանական եւ** | նշանակում է 2022 թվականի ԵՆԲ բնապահպանական եւ սոցիալական չափանիշներ, որոնք հրապարակված են Բանկի կայքում, եւ որոնք |

**սոցիալական չափանիշներ»** նկարագրում են շրջակա միջավայրը եւ սոցիալական պահանջները, որոնք պետք է բավարարեն ԵՆԲ-ի կողմից ֆինանսավորվող բոլոր ծրագրերը եւ տարբեր կողմերի, այդ թվում՝ Դրամաշնորհի շահառուն եւ Իրականացնող մարմինը:

**«Շրջակա միջավայր»** նշանակում է հետեւյալը.

ա) կենդանական եւ բուսական աշխարհ, կենդանի օրգանիզմներ, ներառյալ՝ էկոլոգիական համակարգերը,

բ) ցամաք, հող, ջուր (ներառյալ՝ ծովային եւ առափնյա ջրերը), օդ, կլիմա եւ լանդշաֆտ (բնական կամ տեխնածին կառույցներ՝ վերգետնյա կամ ստորգետնյա),

գ) մշակութային ժառանգություն (բնական, նյութական եւ ոչ նյութական),

դ) կառուցապատված շրջակա միջավայր, եւ

ե) մարդու առողջություն եւ բարեկեցություն:

**«Շրջակա միջավայրի վրա եւ սոցիալական ազդեցության գնահատման ուսումնասիրություն»** նշանակում է շրջակա միջավայրի վրա եւ սոցիալական ազդեցության գնահատման հետեւանքով ուսումնասիրություն կամ հաշվետվություն, որը բացահայտում եւ գնահատում է հնարավոր էական շրջակա միջավայրի վրա եւ սոցիալական ազդեցությունները եւ (կամ) ռիսկերը, որոնք կապված են առաջարկվող նախագծի հետ, եւ առաջարկում է միջոցներ՝ ցանկացած ազդեցությունից եւ (կամ) ռիսկից խուսափելու, դրանք նվազագույնի հասցնելու եւ (կամ) վերացնելու համար: Այս ուսումնասիրությունը ենթակա է հանրային խորհրդակցության՝ ծրագրի ուղղակի եւ անուղղակի շահագրգիռ կողմերի հետ:

**«Բնապահպանական եւ սոցիալական չափանիշներ»** նշանակում է՝

ա) Բնապահպանական օրենքներ եւ Սոցիալական օրենքներ, որոնք կիրառվում են Ծրագրի եւ Իրականացնող մարմնի նկատմամբ,

բ) ԵՆԲ բնապահպանական եւ սոցիալական չափանիշներ, եւ

գ) Շրջակա միջավայրի վրա եւ սոցիալական ազդեցության գնահատում:

**«Շրջակա միջավայրի մասին օրենք»** նշանակում է՝

ա) ԵՄ օրենք, ներառյալ՝ սկզբունքները ու չափանիշներն այնքանով, որքանով դրանք կիրառվում են Հայաստանի Հանրապետության օրենքներով կամ սահմանված են Բանկի կողմից մինչեւ Ֆինանսական պայմանագրի ամսաթիվը,

բ) Հայաստանի Հանրապետության օրենքներ եւ կարգավորումներ, եւ

գ) միջազգային պայմանագրեր եւ կոնվենցիաներ, որոնք ստորագրվել եւ վավերացվել են կամ այլ կերպ կիրառելի եւ պարտադիր են Հայաստանի Հանրապետության համար,

յուրաքանչյուր դեպքում հիմնական նպատակը Շրջակա միջավայրի պահպանումն է, պաշտպանությունը կամ բարելավումը:

**«Բնապահպանական կամ սոցիալական հաստատում»** նշանակում է Բնապահպանական օրենքով կամ Սոցիալական օրենքով պահանջվող ցանկացած Թույլտվություն:

**«Բնապահպանական կամ սոցիալական հայց»** նշանակում է ցանկացած հայց, վարույթ, պաշտոնական ծանուցում կամ քննություն ցանկացած անձի կողմից՝ կապված Բնապահպանական եւ

| | |
|---|---|
| | սոցիալական չափանիշների որեւէ խախտման կամ ենթադրյալ խախտման հետ: |
| **«ԵՄ»** | նշանակում է Եվրոպական միություն: |
| **«ԵՄ մարմին» կամ «ԵՄ մարմիններ»** | նշանակում է Բանկը, Բանկի ներկայացուցիչները, Աուդիտորների եվրոպական դատարանը, Եվրոպական հանձնաժողովը, Եվրոպական հանձնաժողովի ներկայացուցիչները (այդ թվում՝ ԽՊԵԳ-ը եւ Եվրոպական հանձնաժողովի կողմից ներգրավված արտաքին ներկայացուցիչները), Եվրոպական դատախազությունը, Եվրոպական միության ցանկացած այլ հաստատություն կամ Եվրոպական միության՝ Դրամաշնորհի օգտագործումը ստուգելու իրավունք ունեցող մարմին եւ ցանկացած այլ մարմին, որը կիրառելի իրավունքի համաձայն պատշաճ կերպով լիազորված է անհրաժեշտության դեպքում անցկացնելու աուդիտ կամ ստուգիչ գործողություններ՝ կիրառելի իրավունքին համապատասխան: |
| **«ԵՄ իրավունք»** | նշանակում է Եվրոպական միության Համայնքի կանոնագիրք [acquis communautaire], որն արտահայտված է Եվրոպական միության պայմանագրերով, կանոնակարգերով, հրահանգներով, պատվիրակված ակտերով, կատարողական ակտերով եւ Եվրոպական միության Արդարադատության դատարանի նախադեպային իրավունքով: |
| **«Կատարման ժամանակահատված»** | նշանակում է Ուժի մեջ մտնելու ամսաթվից մինչեւ Դադարման ամսաթիվն ընկած ժամանակահատվածը: |
| **«ՖՎՇՀ»** | եզրույթն ունի նախաբանի «Է» կետում դրան տրված իմաստը: |
| **«Վերջնական շահառու»** | եզրույթն ունի նախաբանի «Ա» կետում դրան տրված իմաստը: |
| **«Ֆինանսավորման պայմանագիր»** | եզրույթն ունի նախաբանի «Բ» կետում դրան տրված իմաստը: |
| **«Ահաբեկչության ֆինանսավորում»** | նշանակում է ֆինանսական միջոցների տրամադրում կամ հավաքագրում ցանկացած միջոցներով, ուղղակիորեն կամ անուղղակիորեն՝ նպատակ ունենալով, որ դրանք օգտագործվեն, կամ գիտակցելով, որ դրանք պետք է օգտագործվեն ամբողջությամբ կամ մասնակի Եվրոպական խորհրդարանի եւ Խորհրդի՝ Ահաբեկչության դեմ պայքարի եւ Խորհրդի 2002/475/JHA շրջանակային որոշման, ինչպես նաեւ Խորհրդի 2005/671/JHA որոշման մասին 2017 թվականի մարտի 15-ի 2017/541 հրահանգում թվարկված իրավախախտումներից որեւէ մեկը կատարելու համար (ժամանակ առ ժամանակ փոփոխվել է, փոխարինվել կամ վերաընդունվել): |
| **«Անհաղթահարելի ուժի ազդեցություն»** | նշանակում է Կողմերի վերահսկողությունից վեր գտնվող ցանկացած անկանխատեսելի բացառիկ իրավիճակ կամ իրադարձություն, որը նրանց կամ նրանց գործակալների, աշխատակիցների կամ կատարողների կողմից թույլ տրված սխալի կամ անփութության հետեւանք չէ, ապացուցվում է, որ անհաղթահարելի է՝ չնայած պատշաճ շրջահայացության բոլոր միջոցառումներին, եւ խոչընդոտում է նրանցից ցանկացած մեկի կողմից իր որեւէ պայմանագրային պարտավորության կատարումը: Սարքավորումների կամ նյութերի թերությունները կամ դրանց հասանելիության հետ կապված ուշացումները, աշխատանքային վեճերը, գործադուլները կամ ֆինանսական դժվարությունները չեն կարող վկայակոչվել որպես Անհաղթահարելի ուժ: |

| | |
|---|---|
| **«Տարադրամի փոխարժեք»** | նշանակում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի պաշտոնական փոխարժեքը, որը կիրառելի է համապատասխան վճարման օրվանից, կամ եթե նման փոխարժեք հասանելի չէ եւ մնացած բոլոր նպատակներով տարադրամի այն փոխարժեքը, որը Եվրոպական կենտրոնական բանկը ժամանակ առ ժամանակ հրապարակում է իր կայքում, եւ որը հիմնված է Կենտրոնական բանկերի եվրոպական համակարգի ներսում եւ դրանից դուրս կենտրոնական բանկերի միջեւ ամենօրյա խորհրդակցությունների ընթացակարգի վրա, կամ եթե այդպիսի փոխարժեքը համապատասխան պահին հասանելի չէ կամ այլեւս հասանելի չէ, ապա այդպիսի փոխարժեքին փոխարինող ցանկացած փոխարժեք, ինչպիսին է Բանկի կամ համապատասխան երրորդ կողմի (որը կարող է որոշվել բացառապես Բանկի կողմից) կողմից ողջամիտ առեւտրային եղանակով որոշված փոխարժեքը, որը կարող է ներառել արտարժույթի փոխարժեքի գործող սահմանում՝ այդպիսի փոխարկման համապատասխան օրվա դրությամբ, որը փոխարկում կատարող սուբյեկտի կողմից ձեռք է բերվում առաջատար անկախ դիլերից՝ վերջինիս կողմից բարեխղճորեն եւ ողջամիտ առեւտրային եղանակով ընտրված համապատասխան արժույթով: |
| **«ՀՀՀԸՍ»** | նշանակում է Հայաստանի Հանրապետությունում հաշվապահական հաշվառման համընդհանուր ընդունված սկզբունքներ: |
| **«Դրամաշնորհ»** | եզրույթն ունի նախաբանի «Գ» կետում դրան տրված իմաստը: |
| **«Դրամաշնորհի առավելագույն գումար»** | նշանակում է 10,100,000 (տասը միլիոն հարյուր հազար) եվրո: |
| **«Գնումների ուղեցույց»** | նշանակում է Բանկի կայքում հրապարակված Գնումների ուղեցույց, որը Բանկի կողմից ամբողջությամբ կամ մասամբ ֆինանսավորվող ծրագրերի կազմակերպիչներին տեղեկացնում է այն միջոցների մասին, որոնք պետք է ձեռնարկել Ծրագրի համար պահանջվող աշխատանքներ, ապրանքներ եւ ծառայություններ գնելու համար: |
| **«ԱՄԿ»** | նշանակում է Աշխատանքի միջազգային կազմակերպություն: |
| **«ԱՄԿ չափանիշ»** | նշանակում է ԱՄԿ-ի ցանկացած պայմանագիր, կոնվենցիա կամ դաշնագիր, որը ստորագրվել եւ վավերացվել է կամ այլ կերպ կիրառելի եւ պարտադիր է Հայաստանի Հանրապետության համար, եւ Աշխատանքի հիմնական չափանիշներ (ինչպես սահմանված է ԱՄԿ-ի՝ Աշխատանքի բնագավառի հիմնարար սկզբունքների եւ իրավունքների մասին հռչակագրում): |
| **«Մտավոր սեփականության իրավունքներ»** | նշանակում է ցանկացած հեղինակային իրավունք եւ հարակից իրավունքներ, իրավունքներ նմուշների, տվյալների շտեմարանների, համակարգչային ծրագրերի, դոմենային անվանումների, ապրանքային նշանների, ծառայությունների նշանների, արտոնագրերի, առեւտրային անվանումների նկատմամբ կամ վերոնշյալներից որեւէ մեկը ստանալու համար ցանկացած դիմում, իրավունքներ գաղտնի տեղեկատվության նկատմամբ (այդ թվում՝ «նոու-հաու» եւ առեւտրային գաղտնիքներ) կամ նմանատիպ իրավունքներ կամ պարտավորություններ, բարոյական իրավունքներ՝ յուրաքանչյուր դեպքում՝ գրանցված կամ չգրանցված եւ ներառյալ՝ այդպիսի իրավունքներ ստանալու համար բոլոր դիմումները (կամ դիմելու իրավունքները) եւ դրանց թարմացումները կամ գործողության երկարաձգումները եւ նմանատիպ կամ հավասար բոլոր իրավունքները կամ պաշտպանության ձեւերը, որոնք կարող են այժմ կամ հետագայում գործել աշխարհի որեւէ մասում: |

| | |
|---|---|
| **«Վարկ»** | եզրույթն ունի նախաբանի «Բ» կետում դրան տրված իմաստը: |
| **«Փողերի լվացում»** | նշանակում է՝<br><br>ա) գույքի փոխարկումը կամ փոխանցումը՝ իմանալով, որ այդ գույքը ստացվել է քրեական գործունեությունից կամ այդպիսի գործունեությանը մասնակցությունից՝ գույքի ապօրինի ծագումը թաքցնելու կամ քողարկելու կամ այդպիսի գործունեություն իրականացնելու մեջ ներգրավված որեւէ անձի նրա գործողությունների իրավական հետեւանքներից խուսափելու մեջ օժանդակելու նպատակով,<br><br>բ) գույքի իրական բնույթը, աղբյուրը, գտնվելու վայրը, տնօրինումը, տեղաշարժը, դրա նկատմամբ իրավունքները կամ սեփականությունը թաքցնելը կամ քողարկելը՝ իմանալով, որ այդ գույքը ստացվել է քրեական գործունեությունից կամ այդպիսի գործունեությանը մասնակցությունից,<br><br>գ) գույքի ձեռքբերումը, տիրապետումը կամ օգտագործումը՝ ստանալու պահին իմանալով, որ այդ գույքը ստացվել է քրեական գործունեությունից կամ այդպիսի գործունեությանը մասնակցությունից, կամ<br><br>դ) վերոնշյալ կետերում նշված գործողություններից մեկին մասնակցությունը, կապը դրանք կատարելու հետ, դրանք կատարելու փորձերը եւ դրանց կատարմանն օժանդակելը կամ դրդելը, նպաստելը եւ դրանց վերաբերյալ խորհրդատվությունը: |
| **«ՀՆՀ»** | եզրույթն ունի նախաբանի «Գ» կետում դրան տրված իմաստը: |
| **«ՀՆՀ դրամաշնորհ»** | եզրույթն ունի նախաբանի «Գ» կետում դրան տրված իմաստը: |
| **«Անձնական տվյալներ»** | եզրույթն ունի «Համայնքի կառույցների եւ մարմինների կողմից անձնական տվյալների մշակման առնչությամբ անհատների պաշտպանության եւ այդ տվյալների ազատ տեղաշարժի մասին» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2018 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ 2018/1725 (ԵՄ) կանոնակարգի 3-րդ հոդվածով դրան տրված իմաստը, եւ ուժը կորցրած ճանաչվող թիվ 45/2001 (ԵԽ) կանոնակարգ եւ թիվ 1247/2002/ԵԽ (ՊՏ Լ 295, 21.11.2018., էջեր՝ 39-98)՝ այն փոփոխություններով եւ լրացումներով, որոնք կարող են կատարվել ժամանակ առ ժամանակ: |
| **«Գնումների պլան»** | եզրույթն ունի Գնումների ուղեցույցում դրան տրված իմաստը: |
| **«Ծրագրի իրականացման վերաբերյալ համաձայնագիր»** | եզրույթն ունի նախաբանի «Բ» կետում դրան տրված իմաստը: |
| **«Արգելված վարքագիծ»** | նշանակում է Ահաբեկչության ֆինանսավորում, Փողերի լվացում կամ Արգելված գործելակերպ: |
| **«Արգելված գործելակերպ»** | նշանակում է՝<br><br>ա) Հարկադիր գործելակերպ, այսինքն՝ որեւէ կողմի կամ կողմի գույքին վնաս հասցնելը կամ վնասելը կամ ուղղակիորեն կամ անուղղակիորեն վնաս հասցնելը կամ վնասել սպառնալը՝ կողմի գործողությունների վրա ոչ պատշաճ կերպով ազդելու համար,<br><br>բ) Դավադիր գործելակերպ, այսինքն՝ երկու կամ ավելի կողմերի միջեւ պայմանավորվածություն, որն ուղղված է ոչ պատշաճ նպատակին հասնելուն, այդ թվում՝ մեկ այլ կողմի գործողությունների վրա ոչ պատշաճ կերպով ազդելուն, |

գ) Կոռուպցիոն գործելակերպ, այսինքն՝ կողմի կողմից ցանկացած արժեքավոր բան առաջարկելը, տալը, ստանալը կամ շորթելը՝ ուղղակիորեն կամ անուղղակիորեն, մեկ այլ կողմի գործողությունների վրա ոչ պատշաճ կերպով ազդելու համար,

դ) Խարդախ գործելակերպ, այսինքն՝ ցանկացած արարք կամ բացթողում, այդ թվում՝ խեղաթյուրելը, որը գիտակցաբար կամ անփութորեն մոլորեցնում կամ փորձում է մոլորեցնել կողմին՝ ֆինանսական (ներառյալ՝ հարկումից խուսափելու հետ կապված) կամ այլ օգուտ ստանալու կամ պարտավորությունից խուսափելու նպատակով,

ե) Խոչընդոտող գործելակերպ, այսինքն՝ սույն Դրամաշնորհի կամ Ծրագրի հետ կապված Հարկադիր, Դավադիր, Կոռուպցիոն կամ Խարդախ գործելակերպի առնչությամբ քննության մասով՝ ա) քննության նյութ հանդիսացող ապացույցները ոչնչացնելը, կեղծելը, փոփոխելը կամ թաքցնելը կամ քննիչներին կեղծ ցուցմունք տալը՝ քննությունը խոչընդոտելու համար, բ) կողմին սպառնալը, հետապնդելը կամ ահաբեկելը՝ թույլ չտալով, որ վերջինս բացահայտի այն, ինչ իրեն հայտնի է քննության համար վերաբերելի հարցերի մասին, կամ

քննություն իրականացնի, կամ գ) աուդիտի կամ տեսչական ստուգման կամ տեղեկատվության մատչելիության՝ ԵՆԲ-ի խմբի պայմանագրային իրավունքների իրականացմանը խոչընդոտելու նպատակ ունեցող արարքները:

զ) Հարկային հանցագործություն, այսինքն՝ բոլոր իրավախախտումները, այդ թվում՝ ուղղակի հարկերին եւ անուղղակի հարկերին վերաբերող եւ Հայաստանի Հանրապետության ազգային օրենսդրությամբ սահմանված հարկային հանցագործությունները, որոնք պատժելի են ազատազրկման կամ մեկ տարուց ավելի առավելագույն ժամկետով կալանավորման մասին որոշման հիման վրա,

է) ԵՆԲ խմբի ռեսուրսների եւ ակտիվների չարաշահում, այսինքն՝ ցանկացած անօրինական գործունեություն, որը կատարվել է ԵՆԲ խմբի ռեսուրսները կամ ակտիվները (ներառյալ՝ սույն Պայմանագրով տրամադրված միջոցները) գիտակցաբար կամ անփութորեն օգտագործելով:

**«Հաշվետվություններ»** եզրույթն ունի 4-րդ հավելվածում (*Հաշվետվությունները*) դրան տրված իմաստը:

**«Համապատասխան անձ»** նշանակում է՝

ա) Դրամաշնորհի շահառուի մասով՝ ցանկացած նախարարություն, կենտրոնական գործադիր իշխանության պետական այլ մարմիններ, կենտրոնական բանկ կամ պետական այլ ստորաբաժանումներ կամ ցանկացած պաշտոնյա կամ իր նախարարություններից որեւէ մեկի ներկայացուցիչ կամ նրա համար, նրա անունից կամ նրա վերահսկողության ներքո գործող որեւէ այլ անձ, որը Դրամաշնորհի կամ Ծրագրի առնչությամբ ղեկավարելու եւ (կամ) վերահսկողություն իրականացնելու լիազորություն ունի, եւ

բ) Վերջնական շահառուի մասով՝ նրա քաղաքապետը, ցանկացած այլ պաշտոնյա կամ ներկայացուցիչ կամ նրա համար, նրա անունից կամ նրա վերահսկողության ներքո գործող որեւէ այլ անձ, որը Դրամաշնորհի կամ Ծրագրի առնչությամբ ղեկավարելու եւ (կամ) հսկողություն իրականացնելու

լիազորություն ունի:

**«Պատժամիջոցների ենթարկված անձ»** նշանակում է անհատ կամ կազմակերպություն (կասկածից զերծ մնալու համար «կազմակերպություն» եզրույթը ներառում է ցանկացած կառավարություն, խումբ կամ ահաբեկչական կազմակերպություն, սակայն չի սահմանափակվում դրանցով), որը Պատժամիջոցների թիրախ է կամ այլ կերպ ենթարկվում է Պատժամիջոցների (ներառյալ, սակայն չսահմանափակվելով, ցանկացած այնպիսի անձի կամ կազմակերպության ուղղակի կամ անուղղակի սեփականությունը հանդիսանալու կամ վերջինիս կողմից այլ կերպ վերահսկվելու հետեւանքով, որը Պատժամիջոցների թիրախ է կամ այլ կերպ ենթարկվում է Պատժամիջոցների):

**«Պատժամիջոցներ»** նշանակում է տնտեսական կամ ֆինանսական պատժամիջոցների մասին օրենքներ, կանոնակարգեր, առեւտրային էմբարգո կամ այլ սահմանափակող միջոցներ (ներառյալ, մասնավորապես, սակայն չսահմանափակվելով ահաբեկչության ֆինանսավորման հետ կապված միջոցներով), որոնք ժամանակ առ ժամանակ ուժի մեջ են մտնում, կիրառվում, իրականացվում կամ կատարվում են հետեւյալներից որեւէ մեկի կողմից.

ա) Միավորված ազգերի կազմակերպություն, ներառյալ, ի թիվս այլնի, Միավորված ազգերի կազմակերպության Անվտանգության խորհուրդը,

բ) Եվրոպական միություն, ներառյալ, ի թիվս այլնի, Եվրոպական միության խորհուրդը եւ Եվրոպական հանձնաժողովը, եւ Եվրոպական միության ցանկացած այլ իրավասու մարմին/կառույց կամ գերատեսչություն,

գ) Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարություն եւ նրա ցանկացած վարչություն, բաժին, գերատեսչություն կամ գրասենյակ, ներառյալ, ի թիվս այլնի, ԱՄՆ գանձապետարանի Օտարերկրյա ակտիվների վերահսկման գրասենյակը (ՕԱՎԳ), Միացյալ Նահանգների պետդեպարտամենտը եւ (կամ) Միացյալ Նահանգների առեւտրի դեպարտամենտը, եւ

դ) Միացյալ Թագավորության կառավարություն եւ ցանկացած վարչություն, բաժին, գերատեսչություն, գրասենյակ կամ մարմին, ներառյալ, ի թիվս այլնի, Նորին գերազանցության գանձապետարանի ֆինանսական պատժամիջոցների իրականացման գրասենյակը եւ Միացյալ Թագավորության Միջազգային առեւտրի դեպարտամենտը:

**«Սոցիալական օրենք»** նշանակում է հետեւյալներից յուրաքանչյուրը.

ա) Հայաստանի Հանրապետությունում կիրառվող ցանկացած օրենք, նորմ կամ կանոնակարգ, որոնցից յուրաքանչյուրի դեպքում հիմնական նպատակը սոցիալական ոլորտի պաշտպանությունն է կամ բարելավումը,

բ) ԱՄԿ ցանկացած չափանիշ,

գ) Հայաստանի Հանրապետության կողմից ստորագրված եւ վավերացված կամ Հայաստանի Հանրապետության համար այլ կերպ կիրառելի եւ պարտադիր՝ Միավորված ազգերի կազմակերպության՝ մարդու իրավունքների մասին ցանկացած պայմանագիր, կոնվենցիա կամ դաշնագիր:

**«Սոցիալական ոլորտ»** նշանակում է հետեւյալ բոլոր թվարկածները կամ դրանցից որեւէ մեկը.

ա) աշխատանք եւ աշխատանքային պայմաններ,

բ) մասնագիտական առողջություն եւ անվտանգություն,

գ) խոցելի խմբերի իրավունքներ եւ շահեր,

դ) բնիկ ժողովուրդների իրավունքներ եւ շահեր,

ե) գենդերային հավասարություն,

զ) հանրային առողջություն, ապահովություն եւ անվտանգություն,

է) բռնի տեղահանումներից խուսափում եւ հարկադրված վերաբնակեցման հետեւանքով առաջացած դժվարությունների թեթեւացում, եւ

ը) շահառուների ներգրավվածություն:

**«Ենթաֆինանսավորման համաձայնագիր»** եզրույթն ունի նախաբանի «Ե» կետում դրան տրված իմաստը:

**«Դադարեցման ամսաթիվ»** նշանակում է հետեւյալ ժամկետներից ամենաուշը.

ա) Օժանդակության համաձայնագիրը դադարելու ամսաթիվը, կամ

բ) սույն Համաձայնագիրը դադարելու ամսաթիվը:

**«Միության խորհրդանիշ»** նշանակում է Եվրոպական միության խորհրդանշանը՝ կապույտ ֆոնի վրա տասներկու դեղին աստղերով, որն օգտագործվում է Եվրոպական միության բոլոր կառույցների, մարմինների, գրասենյակների եւ գործակալությունների կողմից՝ համաձայն Եվրոպական միության հրապարակումների գրասենյակի Միջկառուցային ոճային ուղեցույցի եւ Եվրոպական հանձնաժողովի կողմից մշակված՝ «ԵՄ խորհրդանիշի օգտագործումը ԵՄ ծրագրերի համատեքստում եւ ԵՄ-ի անդամ չհանդիսացող երկրներում. ուղեցույց շահառուների եւ այլ երրորդ կողմերի համար» ձեռնարկի՝ դրանցում ժամանակ առ ժամանակ կատարվող թարմացումներով:

Այդ ուղեցույցը հասանելի է հետեւյալ հղմամբ. http://ec.europa.eu/dgs/communication/services/visual_identity/pdf/use-emblem_en.pdf

**«Աշխատանքներ»** նշանակում է Ծրագրի հետ կապված, Դրամաշնորհից ֆինանսավորվող աշխատանքներն ու նյութական միջոցները՝ նկարագրված ստորեւ՝ 1-ին հավելվածում (*Ծրագրի նկարագրությունը*):

1.2. Այն դեպքում, երբ որեւէ հավելվածում մեծատառով գրված եզրույթին այլ իմաստ է տրվում, այդ սահմանումն ունի այդ հավելվածում դրան տրված իմաստը բացառապես այդ հավելվածի շրջանակներում:

1.3. Սույն Համաձայնագրում օգտագործվող ենթավերնագրերը եւ այդ ենթավերնագրերին կատարվող բոլոր հղումներն ունեն միայն հղումներ կատարելը դյուրացնելու նպատակ եւ հաշվի չեն առնվում սույն Համաձայնագիրը

մեկնաբանելիս:

1.4. Եթե համատեքստից այլ բան չի բխում, ապա սույն Համաձայնագրի նախաբանի առանձին կետերին, առանձին հոդվածներին, հավելվածներին եւ մյուս բաժիններին կատարվող հղումները սույն Համաձայնագրի նախաբանի համապատասխան կետերին, համապատասխան հոդվածներին, հավելվածներին եւ մյուս բաժիններին կատարվող հղումներ են:

1.5. Որեւէ օրենքի, այդ թվում՝ սույն Համաձայնագրում կոնկրետ նշված որեւէ օրենսդրական կամ իրավական ակտի կատարված հղումը, անկախ այն հանգամանքից, թե այդ օրենքում կատարված փոփոխություններին կամ դրան փոխարինող օրենքին սույն Համաձայնագրում հղում կատարվում է, թե՝ ոչ, մեկնաբանվում է որպես այդ օրենքին կատարված այնպիսի հղում, որը ներառում է դրանում ժամանակ առ ժամանակ կատարվող փոփոխությունները կամ նույն կամ նմանատիպ կարգավորման առարկա ունեցող բոլոր այն օրենքները, որոնք ժամանակ առ ժամանակ փոխարինում են այդ նույն օրենքը, երկարացնում դրա գործողության ժամկետը, կոնսոլիդացնում կամ փոփոխում այն: Համարվում է նաեւ, որ այդպիսի հղումը ներառում է այդ օրենքի պահանջով կամ դրա համաձայն ընդունված բոլոր կարգավորումները, ենթաօրենսդրական ակտերը, տրված հրամաններն ու կարգադրությունները:

1.6. Հանրային կազմակերպություններին կատարված հղումները ներառում են դրանց իրավահաջորդներին, եւ եթե հանրային կազմակերպությունը դադարում է գոյություն ունենալ կամ դադարում է կատարել իր գործառույթներն առանց իրավահաջորդ ունենալու, ապա համարվում է, որ տվյալ հանրային կազմակերպությանը կատարված հղումները ներառում են հղում ցանկացած այնպիսի հանրային կազմակերպության կամ ցանկացած այնպիսի կազմակերպության կամ սուբյեկտի, որն իր վրա է վերցրել տվյալ հանրային կազմակերպության գործառույթները կամ պարտավորությունները կամ երկուսը միասին:

1.7. Ընդհանուր գործածության բառերին, որոնց նախորդում կամ հաջորդում են «այլ» կամ «այդ թվում» կամ «ինչպիսին է» կամ «մասնավորապես» բառերը, չի տրվում սահմանափակող իմաստ, քանի որ դրանց հաջորդում կամ նախորդում են (կախված դեպքից) որոշակի օրինակներ, որոնք ընկնում են այդ ընդհանուր գործածության բառերի իմաստի շրջանակներում:

1.8. Եթե համատեքստից այլ բան չի բխում, ապա սույն Համաձայնագրում ցանկացած տեղ օգտագործվելիս հոգնակին ներառում է եզակին, եզակին ներառում է հոգնակին, եւ յուրաքանչյուր սեռ ներառում է բոլոր մյուս սեռերը:

1.9. Բոլոր այն դեպքերում, երբ պահանջվում է, որ որեւէ փաստաթուղթ պետք է «վավերացված» լինի, այդ պահանջը նշանակում է, որ համապատասխան փաստաթուղթը պետք է վավերացված լինի որպես լիարժեք ուժի մեջ գտնվող եւ գործող, ինչպես նաեւ համապատասխան կրկնօրինակի տրամադրման ամսաթվի դրությամբ չփոփոխված փաստաթղթի իսկական եւ ամբողջական կրկնօրինակ:

## ՀՈԴՎԱԾ 2.

## Առարկան

2.1. Սույն Համաձայնագրի նպատակն է սահմանել Կողմերի իրավունքներն ու պարտավորությունները՝ կապված Աշխատանքների իրականացման համար Դրամաշնորհի օգտագործման հետ:

2.2. Դրամաշնորհի շահառուն կատարում է հետեւյալ գործողությունները եւ ապահովում է, որ Վերջնական շահառուն կատարի հետեւյալ գործողությունները՝ ըստ կիրառելիության.

ա) Դրամաշնորհի աջակցությամբ կատարվող Աշխատանքներն իրականացնում է սույն Համաձայնագրի, Ֆինանսավորման պայմանագրի եւ Ծրագրի վերաբերյալ պայմանագրի դրույթներին համապատասխան, որոնք ժամանակ առ ժամանակ Բանկի հաստատմամբ ենթարկվում են փոփոխությունների, ներառյալ՝ սույն Համաձայնագրի 1-ին հավելվածում (*Ծրագրի նկարագրությունը*) տրված ժամանակացույցը եւ Ծրագրի նկարագրությունը եւ սույն

Համաձայնագրի 2-րդ հավելվածում (*Ծրագրի գնահատված ծախսերը*) հաշվարկված բյուջեն,

բ) ստանում է Բանկի նախնական գրավոր հավանությունը՝ նախքան Ծրագրի նախագծում, իրականացման ժամանակացույցում, ծախսերում, պլաններում եւ ծախսերի ծրագրերում որեւէ զգալի փոփոխություն կատարելը.

գ) Դրամաշնորհի միջոցով ֆինանսավորվող Աշխատանքներն ու հարակից Պայմանագրերն իրականացնում է իրենց պատասխանատվությամբ եւ սույն Համաձայնագրի դրույթներին համապատասխան՝ 1-ին հավելվածով (Ծրագրի նկարագրությունը) սահմանված նպատակներին հասնելու համար.

դ) Դրամաշնորհին օգտագործում է բացառապես Աշխատանքների ֆինանսավորման համար՝ սույն Համաձայնագրով սահմանված պայմաններին համապատասխան: Այդ գործընթացում Դրամաշնորհի շահառուն իր պարտավորությունները պետք է կատարի, ինչպես նաեւ պետք է ապահովի, որ Վերջնական շահառուն նույնպես կատարի իր պարտականություններն անհրաժեշտ խնամքով, արդյունավետությամբ, թափանցիկությամբ եւ շրջահայացությամբ՝ ողջամիտ ֆինանսական կառավարման սկզբունքին եւ ոլորտում լավագույն գործելակերպերին համապատասխան.

ե) Պայմանագրերն ու Դրամաշնորհի աջակցությամբ իրագործվող Ծրագիրն իրականացնելիս պահպանում է կիրառելի բնապահպանական եւ սոցիալական օրենսդրությունը, այդ թվում՝ համապատասխան բնապահպանական եւ մարդու իրավունքների վերաբերյալ բազմակողմ համաձայնագրերն ու միջազգային պայմանագրերը եւ բնապահպանական եւ սոցիալական չափանիշները.

զ) ստանում եւ պահպանում է Ծրագրի համար պահանջվող Բնապահպանական կամ սոցիալական հաստատումները.

է) համապատասխանում է Բնապահպանական կամ սոցիալական ցանկացած այդպիսի հաստատման.

ը) Դրամաշնորհի միջոցով ֆինանսավորվող բոլոր Պայմանագրերին առնչվող գնումների գործընթացներն իրականացնում է Գնումների ուղեցույցին համապատասխան.

թ) լիարժեք համագործակցում է Եվրոպական միության ֆինանսական շահերի պաշտպանության գործում.

ժ) ապահովում է Եվրոպական հանձնաժողովի՝ իր իրավասությունները համակողմանիորեն իրականացնելու իրավունքը.

ժա) Հատկացումների հաշվեհամարը հատկացնում է Ծրագրին՝ բացառելու համար Դրամաշնորհի շահառուի եւ Վերջնական շահառուի ցանկացած այլ գործունեություն՝ ըստ կիրառելիության.

ժբ) չի ստեղծում կամ չի թույլատրում որեւէ գանձում, գրավ, արգելանք կամ այլ ապահովման երաշխիք, որն ապահովում է որեւէ անձի պարտավորությունը, կամ որեւէ այլ համաձայնություն կամ պայմանավորվածություն, որն ունի նմանատիպ ազդեցություն Հատկացումների հաշվեհամարի վրա. եւ

ժգ) անհապաղ տեղեկացնում է Բանկին հետեւյալի մասին.

i) որեւէ երրորդ կողմի կողմից նախաձեռնված ցանկացած հայց կամ բողոք կամ բարձրացված ցանկացած առարկություն կամ Դրամաշնորհի շահառուի կամ Վերջնական շահառուի կողմից ստացված որեւէ իրական բողոք, որն էական է Ծրագրի վրա ազդեցություն ունեցող բնապահպանական, սոցիալական կամ այլ հարցերի առումով.

ii) բնապահպանական կամ սոցիալական ցանկացած պահանջ, որն իր տեղեկությունների համաձայն ներկայացվել է, քննվում է կամ հնարավոր է ներկայացվի իր եւ (կամ) Վերջնական շահառուի դեմ.

iii) Դրամաշնորհի շահառուին հայտնի ցանկացած փաստ կամ իրադարձություն, որը կարող է էականորեն խաթարել Ծրագրի կատարման պայմաններն ու գործողությունը կամ ազդել դրանց վրա.

iv) Ծրագրին առնչվող ցանկացած միջադեպ կամ պատահար, որը կարող է

ունենալ կամ հավանաբար կունենա բացասական ազդեցություն բնապահպանական կամ սոցիալական հարցերի վրա.

v) իր եւ (կամ) Վերջնական շահառուի կողմից Բնապահպանական եւ սոցիալական չափանիշների չպահպանման ցանկացած դեպք.

vi) Բնապահպանական եւ սոցիալական հաստատման ցանկացած կասեցում, չեղարկում կամ էական փոփոխություն:

2.3. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու ամսաթվին Դրամաշնորհի շահառուն ներկայացնում է, որ հետեւյալ հանգամանքներից որեւէ մեկն առկա չէ.

ա) սնանկ է, ենթակա է անվճարունակ ճանաչվելու կամ նրա գործունեությունը դադարեցվում է, իր գործերը կառավարում են լուծարողը կամ դատարանները, համաձայնության է եկել պարտատերերի հետ, կասեցրել է իր տնտեսական գործունեությունը, այդ հարցերով նրա դեմ վարույթ է հարուցվել կամ գտնվում է ազգային օրենսդրության կամ կանոնակարգերով նախատեսված նման ընթացակարգից բխող համանման որեւէ իրավիճակում. կամ

բ) վերջին 5 (հինգ) տարիների ընթացքում հարկերի վճարման կամ սոցիալական ապահովության վճարների կատարման գծով իր պարտավորությունները խախտելու համար նրա դեմ կայացվել է վերջնական դատավճիռ կամ վերջնական վարչական որոշում՝ կիրառելի իրավունքին համապատասխան, եւ այդպիսի պարտավորությունները մնում են չմարված, քանի դեռ դրանց մարման համար պարտադիր պայմանավորվածություն ձեռք չի բերվել. Կամ

գ) վերջին 5 (հինգ) տարիների ընթացքում նա կամ նրա նկատմամբ ներկայացուցչության, որոշումներ կայացնելու կամ վերահսկելու լիազորություններ ունեցող անձինք վերջնական դատավճռով դատապարտվել են իրենց մասնագիտական վարքագծին առնչվող հանցագործության համար, ինչը կազդեր Դրամաշնորհին իրականացնելու նրանց կարողության վրա, եւ որի համար հիմք է

ծառայել նշված պատճառներից մեկը՝

i) անփութորեն մոլորեցնող տեղեկությունների տրամադրում, ինչը կարող է լուրջ ազդեցություն ունենալ, կամ խարդախորեն այնպիսի տեղեկությունների խեղաթյուրում, որը պահանջվում է բացառման հիմքերի բացակայությունը ստուգելու կամ ընտրության չափանիշները կատարելու կամ պայմանագիրը կամ համաձայնագիրը կատարելու համար.

ii) այլ անձանց հետ այնպիսի համաձայնության ձեռքբերում, որն ուղղված է մրցակցությունը խեղաթյուրելուն.

iii) համաձայնագրի կնքման ընթացակարգն իրականացնելիս կատարող մարմնի կողմից որոշման կայացման գործընթացի վրա անհարկի ներգործելու փորձ.

iv) այնպիսի գաղտնի տեղեկությունների ձեռքբերման փորձ, որը կարող է նրան անհարկի առավելություններ տալ համաձայնագրի կնքման ընթացակարգում. կամ

դ) նրա դեմ կայացվել է բացառման մասին որոշում, որը ներառված է Եվրոպական հանձնաժողովի կողմից ստեղծված Վաղ հայտնաբերման եւ բացառման համակարգի հրապարակված տվյալների բազայում. կամ

ե) վերջին 5 (հինգ) տարիների ընթացքում նրա կամ ներկայացուցչության, որոշումներ կայացնելու կամ վերահսկելու լիազորություններ ունեցող անձանց դեմ կայացվել է վերջնական դատավճիռ՝ խարդախության, Արգելված վարքագծի, հանցավոր կազմակերպությանը մասնակցության, Փողերի լվացման կամ Ահաբեկչության ֆինանսավորման, ահաբեկչական հանցագործությունների կամ ահաբեկչական գործողությունների հետ կապված հանցանքների համար, կամ այդպիսի հանցագործություններ հրահրելու, դրանց օժանդակելու, դրանք խրախուսելու կամ այդպիսի հանցագործություններ կատարելու փորձերի համար, կամ երեխաների աշխատանքի եւ մարդկանց թրաֆիքինգի այլ ձեւերի համար՝ պայմանով, որ Բանկը կարող է որոշել չբացառել Դրամաշնորհի շահառուին, եթե

Դրամաշնորհի շահառուն կարող է ապացույցներ ներկայացնել առ այն, որ ձեռնարկվել է թերությունների վերացման միջոցներ՝ ցուցադրելու համար իր հուսալիությունը՝ չնայած բացառման հիմքի առկայությանը, կամ երբ դա հույժ անհրաժեշտ է ծառայության շարունակականությունն ապահովելու համար, սահմանափակ տեւողությամբ եւ մինչեւ չընդունվեն թերությունների վերացման միջոցները, կամ եթե բացառումը կլիներ անհամաչափ՝ հաշվի առնելով հանգամանքները:

2.4. Դրամաշնորհի շահառուն՝

ա) հաստատում է, որ Դրամաշնորհի շահառուի կողմից սույն Համաձայնագիրը կնքելու, իրենց իրավունքներն իրացնելու եւ սույն Համաձայնագրով սահմանված իր պարտավորություններին համապատասխանելու համար պահանջվող կամ ցանկալի բոլոր Լիազորությունները ձեռք են բերվել, ուժի մեջ են եւ գործում են, եւ

բ) ապահովում է, որ Վերջնական շահառուն համապատասխանի վերոհիշյալ 2.2 պարբերության մեջ շարադրված հանձնառություններին սույն Համաձայնագրի գործողության ամբողջ ընթացքում:

## ՀՈԴՎԱԾ 3.

## Ուժի մեջ մտնելը եւ գործողության ժամկետը

3.1. Համաձայնագիրն ուժի մեջ է Ուժի մեջ մտնելու ամսաթվից եւ վավեր է այնքան ժամանակ, քանի դեռ դրա դրույթներից բխող որեւէ իրավունք, պարտականություն կամ պարտավորություն մնում է չկատարված, եթե այն այլ կերպ չի դադարեցվել 23-րդ հոդվածի (*Դադարեցումը*) դրույթներին համապատասխան:

3.2. Կատարման ժամանակահատվածն ավարտվում է ոչ ուշ, քան Դադարեցման ամսաթվին:

## ՀՈԴՎԱԾ 4.

## Աշխատանքների ֆինանսավորումը

4.1. Ծրագրի համար նախատեսված ընդհանուր ծախսերը գնահատված են մինչեւ 38,000,000 (երեսունութ միլիոն) եվրո՝ առանց հարկերի, ինչպես ավելի մանրամասն ներկայացված է ստորեւ՝ 2-րդ հավելվածում (*Ծրագրի գնահատված ծախսերը*): Ծրագրի վերջնական ծախսերը որոշվում են Աշխատանքների ավարտից հետո՝ Կապալառուների կողմից ներկայացված վերջնական հաշիվ-ապրանքագրերի հիման վրա, ինչպես վճարվել է Վերջնական շահառուի կողմից եւ ընդունվել է Բանկի կողմից՝ 7-րդ հոդվածին (*Դրամաշնորհի վճարումը*) համապատասխան:

4.2. Սույն Համաձայնագրի պայմաններին համապատասխան՝ Բանկը ստանձնում է Դրամաշնորհի շահառուի համար հասանելի դարձնել մինչեւ Դրամաշնորհի առավելագույն գումարի չափով Դրամաշնորհ, որը պետք է օգտագործվի Աշխատանքները ֆինանսավորելու համար:

4.3. Դրամաշնորհի շահառուն ընդունում է, որ Դրամաշնորհի առավելագույն գումարն այն առավելագույն գումարն է, որը Բանկն իր հայեցողությամբ կարող է նվազեցնել սույն Համաձայնագրով Բանկի համար սահմանված պարտականությունները ֆինանսավորելու կամ կատարելու համար նրա կողմից կատարված կամ կրած լրացուցիչ կամ ավելացված ծախսերը, ի թիվս այլնի, ծածկելու համար անհրաժեշտ չափով, ներառյալ, բայց չսահմանափակվելով, Բանկի կողմից Դրամաշնորհի կառավարումը (ներառյալ, բայց չսահմանափակվելով, մինչեւ Դրամաշնորհի շահառուին վճարելը ՖՎՇՀ-ին համապատասխան Բանկի կողմից սահմանված ունիտար ֆոնդերում Դրամաշնորհի պարտադիր ներդրման արդյունքում Բանկի կողմից կատարված ցանկացած ծախս):

4.4. Դրամաշնորհն օգտագործվում է բացառապես Աշխատանքների

առնչությամբ առաջ եկած թույլատրելի ծախսերը ծածկելու համար՝ 8-րդ հոդվածով (*Թույլատրելի ծախսերը*) նախատեսված կարգով:

4.5. Համաձայն Օժանդակության համաձայնագրի դրույթների՝ եթե Կատարման ժամանակահատվածի ավարտին Աշխատանքների թույլատրելի ծախսերի՝ 8-րդ հոդվածի (*Թույլատրելի ծախսերը*) համաձայն որոշված վերջնական գումարը պակաս է Դրամաշնորհի՝ 4.2 հոդվածում (*Աշխատանքների ֆինանսավորումը*) նշված առավելագույն գումարից, ապա Բանկը պետք է տարբերությունը վերադարձնի Եվրոպական հանձնաժողովին:

4.6. Դրամաշնորհի շահառուի կամ Վերջնական շահառուի համար Դրամաշնորհը չպետք է ունենա շահույթ ստեղծելու նպատակ կամ ազդեցություն:

4.7. Որեւէ կասկածի տեղիք չտալու նպատակով Դրամաշնորհից օգտվող Վերջնական շահառուի կողմից գնված բոլոր սարքավորումներն ու ակտիվները պատկանում են Վերջնական շահառուին:

## ՀՈԴՎԱԾ 5.

## Նախագծումը եւ գնումները

5.1. Դրամաշնորհի շահառուն ապահովում է, որ Վերջնական շահառուն ստանձնի Ծրագրի համար սարքավորումների գնումը, Աշխատանքների մատուցումը եւ պատվիրումը՝ գնումների ընդունելի ընթացակարգերի համաձայն՝ ապահովելով, ի բավարարումն Բանկի, համապատասխանություն վերջինիս՝ Գնումների ուղեցույցում նկարագրված քաղաքականությանը եւ Ֆինանսավորման պայմանագրի պայմաններին:

## ՀՈԴՎԱԾ 6.

## Պայմանագրերի փոփոխումը

6.1. Մինչեւ Պայմանագրում որեւէ փոփոխություն կատարելը, Պայմանագրում սահմանված որեւէ պայմանից հրաժարվելը կամ Պայմանագիրը

որեւէ այլ կերպ փոփոխելը, ինչպես նաեւ Պայմանագիրը կասեցնելու, չեղարկելու, լուծելու կամ այլ կերպ դադարեցնելու մասին որոշում կայացնելիս Դրամաշնորհի շահառուն Բանկին տեղեկացնում է կամ ապահովում է, որ Վերջնական շահառուն Բանկին տեղեկացնի առաջարկված գործողության ժամկետի երկարաձգման, փոփոխության, փոխարինման, հրաժարման, փոփոխման կամ որոշման եւ դրանց պատճառների մասին՝ փոփոխությունները կիրառության մեջ դնելու նախատեսված օրվանից առնվազն 30 (երեսուն) օրացուցային օր առաջ:

6.2. Եթե Բանկը որոշում է, որ առաջարկությունը հակասում է սույն Համաձայնագրի դրույթներին, Ֆինանսավորման պայմանագրին կամ որեւէ կերպ ընդունելի չի լինի Օժանդակության համաձայնագրի դրույթների համատեքստում, ապա այն համապատասխանաբար Դրամաշնորհի շահառուին կամ Վերջնական շահառուին անմիջապես տեղեկացնում է այդ մասին՝ նշելով այդպիսի որոշման պատճառները: Եթե Բանկն առաջարկությունը համարում է ընդունելի, ապա այն համապատասխանաբար Դրամաշնորհի շահառուին կամ Վերջնական շահառուին գրավոր հաղորդում է իր՝ ընթացք տալուն համաձայնության մասին:

6.3. Դրամաշնորհի շահառուն ապահովում է, որ Վերջնական շահառուն ընթացք տա համապատասխան Պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ փաստաթղթի ստորագրմանը կամ համապատասխան դեպքում՝ Կապալառուին Պայմանագիրը կասեցնելու, չեղարկելու, լուծելու կամ դադարեցնելու մասին ծանուցում ուղարկելուն միայն Բանկի՝ ընթացք տալուն համաձայնությունն ստանալուց հետո՝ 6.2 հոդվածին (*Պայմանագրերի փոփոխումը*) համապատասխան:

6.4. Պայմանագրում այդ կերպ կատարված բոլոր փոփոխությունների կամ համապատասխան Կապալառուին ուղարկված ծանուցումների վավերացված պատճենները պետք է այդ փոփոխությունների կատարման կամ ծանուցումների ուղարկման օրվանից 30 (երեսուն) օրացուցային օրվա ընթացքում տրամադրվեն

Բանկին:

## ՀՈԴՎԱԾ 7.

### Դրամաշնորհի վճարումը

7.1. Ծրագրին աջակցելու նպատակով տրամադրվող Դրամաշնորհը կլրացնի, ի թիվս այլնի, Վարկի եւ ՀՆՀ-ի եւ (կամ) ֆինանսավորման այլ աղբյուրների շրջանակներում ներդրումային դրամաշնորհներից ու տեխնիկական աջակցության դրամաշնորհներից ձեւավորված ֆինանսական փաթեթը: Դրամաշնորհը, համաձայն 1-ին հավելվածի (*Ծրագրի նկարագիրը*), մի շարք այլ նպատակների հետ մեկտեղ օգտագործվում է Ծրագրի ծախսերը ֆինանսավորելու համար:

7.2. Համաձայն՝

ա) վերոհիշյալ 4-րդ հոդվածի (*Աշխապրանքների ֆինանսավորումը)* դրույթների,

բ) Ֆինանսավորման պայմանագրի 1.4 հոդվածում նշված նախադեպային պայմանների կատարման, եւ

գ) 7.6 հոդվածում (*Դրամաշնորհի վճարումը*) նշված նախադեպային պայմանների կատարման՝

Բանկը Դրամաշնորհը հատկացնում է եվրոյով՝ Հատկացումների հաշվեհամարին:

7.3. Դրամաշնորհի շահառուն, հանդես գալով Գործադիր մարմնի ղեկավարի միջոցով, Ենթաֆինանսավորման համաձայնագիր է կնքում Վերջնական շահառուի հետ մինչեւ Դրամաշնորհի առաջին հատկացումը: Դրամաշնորհի շահառուն, հանդես գալով Գործադիր մարմնի ղեկավարի միջոցով, համոզվում է, որ Ենթաֆինանսավորման համաձայնագիրը ներառում է համապատասխան բոլոր ժամկետները, պայմանները եւ պարտականությունները, որոնք թույլ կտան Դրամաշնորհի շահառուին կատարել սույն Համաձայնագրով նախատեսված բոլոր

պարտականությունները եւ պահանջները:

7.4. Սույն Համաձայնագրով հատկացումը կատարվում է Ֆինանսավորման պայմանագրով նախատեսված հատկացումներին *pari passu [հավասար]* եւ *pro rata [համամասնորեն]*՝ համապատասխան հատկացման պահին իրագործելի եւ ողջամիտ չափով:

7.5. Պայմանագրերը կատարելու նպատակով Դրամաշնորհի շահառուն եւ (կամ) Վերջնական շահառուն կարող են Դրամաշնորհի շրջանակներում իրականացնել գումարի Փոխարկում: Բոլոր այն գումարների նկատմամբ, որոնք եվրոյով չեն, կիրառվում է Տարադրամի փոխարժեքը՝ դրանք եվրոյի փոխարկելու համար: Դրամաշնորհի շահառուին եւ (կամ) Վերջնական շահառուին անհիմն վճարված կամ նրա կողմից չօգտագործված կամ ոչ նպատակային օգտագործված եւ Բանկին հետ փոխանցված ցանկացած գումար պետք է արտահայտվի եվրոյով՝ ըստ Տարադրամի փոխարժեքի, եւ հավասար լինի Բանկի կողմից Դրամաշնորհի շահառուին սկզբնապես վճարված՝ եվրոյով արտահայտված համապատասխան գումարին:

7.6. Հատկացումներ կարող են պահանջվել կամ կատարվել միայն այդ դեպքում եւ այն բանից հետո, երբ բավարարվում են հետեւյալ պայմանները՝ Բանկին բավարարող ձեւով եւ բովանդակությամբ.

ա) Կողմերը պատշաճ կերպով ստորագրել են սույն Համաձայնագիրը.

բ) Բանկին տրամադրվել է ապացույց առ այն, որ Դրամաշնորհի շահառուն պատշաճ կերպով լիազորված է սույն Համաձայնագիրը կնքելու համար, եւ որ սույն Համաձայնագիրը Դրամաշնորհի շահառուի անունից ստորագրող անձինք պատշաճ կերպով լիազորված են ստորագրելու համար՝ այդպիսի յուրաքանչյուր անձի ստորագրության իսկական օրինակի հետ միասին.

գ) Ֆինանսավորման պայմանագրի 1.4 հոդվածում նշված նախադեպային պայմանները բավարարվել են Բանկին բավարարող ձեւով եւ բովանդակությամբ.

դ) Դրամաշնորհի շահառուն եւ (կամ) Վերջնական շահառուն Բանկին տրամադրել են Դրամաշնորհի շահառուի եւ (կամ) Վերջնական շահառուի, կիրառելիության դեպքում՝ օրինական ներկայացուցչի կողմից պատշաճ կերպով ստորագրված հավաստագիր եւ հաստատում են, որ 8.1 հոդվածում (*Թույլատրելի ծախսերը*) նշված պայմանները բավարարված են. եւ

ե) Բանկը Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունից ստացել է իրավաբանական եզրակացություն՝ անգլերենով, Բանկին բավարարող ձեւով եւ բովանդակությամբ, որով հաստատվում է, որ՝

i) Դրամաշնորհի շահառուի կողմից սույն Համաձայնագրի կատարումը պատշաճ կերպով լիազորված է, եւ Դրամաշնորհի շահառուի անունից սույն Համաձայնագիրը ստորագրող անձինք պատշաճ կերպով լիազորված են եւ ունեն ստորագրելու հնարավորություն.

ii) Համաձայնագիրը Դրամաշնորհի շահառուի՝ իրավական, գործող եւ պարտադիր ուժ ունեցող համաձայնագիր է, որը կատարելի է դրա ժամկետների համաձայն.

iii) Դրամաշնորհի շահառուի կողմից սույն Համաձայնագրով նախատեսված նրա այլ պարտավորությունների վավեր լիազորման, իրականացման կամ կատարման համար չի պահանջվում Հայաստանի Հանրապետության որեւէ կառավարական կամ պետական մարմնի կամ իշխանության համաձայնությունը, հաստատումը, կարգադրությունը կամ լիազորումը կամ դրանց կողմից գրանցումը, հայտարարագրումը կամ մուտքագրումը.

iv) Դրամաշնորհի շահառուի կողմից Համաձայնագրի իրականացումը, հանձնումը եւ կատարումը չի խախտում Հայաստանի Հանրապետության օրենքները կամ ի վնաս դրանց չէ եւ չի հանգեցնում այնպիսի համաձայնության կամ հանձնառության որեւէ էական խախտման, որը Դրամաշնորհի շահառուի համար պարտադիր է, և

v) Լյուքսեմբուրգի օրենքների կիրառումը՝ որպես Համաձայնագրի

իրականացման պատշաճ օրենք, եւ Դրամաշնորհի շահառուի կողմից փաստացի ներկայացումը արբիտրաժին՝ Միավորված ազգերի կազմակերպության միջազգային առեւտրային իրավունքի հանձնաժողովի արբիտրաժային կանոնների (ՅՈՒՆՍԻՏՐԱԼ) համաձայն:

Այդպիսի իրավաբանական եզրակացությունը պետք է հաստատվի համապատասխան փաստաթղթերով, որոնք վկայում են սույն Համաձայնագիրը կնքելու Հանրապետության լիազորությունը եւ սույն Համաձայնագրի պատշաճ հաստատման ապացույցները՝ Հայաստանի Հանրապետության կիրառելի օրենքներին համապատասխան:

7.7. Բանկը Դրամաշնորհի առաջին տրանշը հատկացնում է 30 (երեսուն) օրացուցային օրվա ընթացքում այն օրվանից հետո, երբ՝

ա) Բանկը Դրամաշնորհի շահառուի կողմից բովանդակությամբ 3-րդ հավելվածում (*Վճարման պահանջագիրը*) ներառված ձեւին համապատասխանող պահանջագիր է ստանում.

բ) պատշաճ կերպով բավարարվում են 7.6 հոդվածում (*Դրամաշնորհի վճարումը*) նշված պայմանները.

գ) Դրամաշնորհի շահառուն եւ (կամ) Վերջնական շահառուն ներկայացրել են, իսկ Բանկն ընդունել է բոլոր հաշվետվությունները, որոնք 9-րդ հոդվածի (*Տեղեկատվություն եւ հաշվետվություններ ներկայացնելը*) համաձայն ենթակա էին ներկայացման՝ նախքան վճարման պահանջագիր ներկայացնելու օրը. եւ

դ) Դրամաշնորհի շահառուն եւ (կամ) Վերջնական շահառուն Բանկին տրամադրել են օժանդակ փաստաթղթեր՝ Բանկին բավարարող ձեւով եւ բովանդակությամբ, որոնցով հիմնավորվում է, որ պահանջվող հատկացման առնվազն 75%-ը (յոթանասունհինգ տոկոսը) Վերջնական շահառուի կողմից արդյունավետորեն օգտագործվելու է Աշխատանքների իրականացման եւ կանխատեսվող ծախսերը հոգալու համար՝ համաձայն 8-րդ հոդվածի (*Թույլատրելի ծախսերը*)՝ պահանջվող հատկացումից հետո 180 (հարյուր ութսուն) օրվա

ընթացքում:

7.8. Մինչեւ 4.2 հոդվածում (*Աշխատանքների ֆինանսավորումը*) նշված Դրամաշնորհի առավելագույն գումարը յուրաքանչյուր տրանշի հատկացումը, բացի առաջին տրանշից, Բանկն իրականցնում է 60 (վաթսուն) օրացուցային օրվա ընթացքում այն օրվանից հետո, երբ՝

ա) Բանկը Դրամաշնորհի շահառուի կողմից բովանդակությամբ 3-րդ հավելվածում (*Վճարման պահանջագիրը*) ներառված ձեւին համապատասխանող պահանջագիր է ստանում.

բ) 7.6 հոդվածում (*Դրամաշնորհի վճարումը*) նշված պայմանները շարունակում են բավարարված մնալ. եւ

գ) Դրամաշնորհի շահառուն եւ (կամ) Վերջնական շահառուն ներկայացրել են, իսկ Բանկն ընդունել է բոլոր հաշվետվությունները, որոնք 9-րդ հոդվածի (*Տեղեկատվություն եւ հաշվետվություններ ներկայացնելը*) համաձայն ենթակա էին ներկայացման՝ նախքան վճարման պահանջագիր ներկայացնելու օրը. եւ

դ) Դրամաշնորհի շահառուն եւ (կամ) Վերջնական շահառուն Բանկին տրամադրել են օժանդակ փաստաթղթեր՝ Բանկին բավարարող ձեւով եւ բովանդակությամբ, որոնցով հիմնավորվում է, որ՝

i) անմիջապես նախորդ հատկացման առնվազն 75%-ը (յոթանասունհինգ տոկոսը), եւ

ii) բոլոր այլ հատկացումների 100%-ը (հարյուր տոկոսը)

Վերջնական շահառուի կողմից արդյունավետորեն օգտագործվել են Աշխատանքների ֆինանսավորման համար կամ ենթակա են ներառման Կապալառուների հետ իրավական պարտավորություններում:

7.9. Եթե Վերջնական շահառուի կատարած՝ Պայմանագրերով սահմանված թույլատրելի ծախսերի վերջնական գումարը Դրամաշնորհի՝ Բանկի կողմից սույն 7-րդ հոդվածի (*Դրամաշնորհի վճարումը*) համաձայն արդեն հատկացված

ընդհանուր գումարից պակաս է, ապա Վերջնական շահառուի կատարած թույլատրելի ծախսերի վերջնական գումարի գերազանցմամբ հատկացված Դրամաշնորհի գումարը, 20-րդ հոդվածի (*Հետգանձումը*) համաձայն, Բանկի կողմից հետ է գանձվում եւ վերադարձվում է Եվրոպական հանձնաժողովին:

7.10. Վերոնշյալի առնչությամբ Դրամաշնորհի շահառուն ապահովում է, որ Վերջնական շահառուն՝

ա) ապահովի, որ Պայմանագրերով սահմանված վճարումների կատարման համար Կապալառուների կողմից ներկայացված հաշիվ-ապրանքագրերը ներառեն առնվազն հետեւյալ տեղեկությունները.

i) Կապալառուի անունը եւ հասցեն.

ii) Պայմանագրի անվանումը եւ ցանկացած հատուկ նույնականացման ծածկագիր.

iii) վճարման համար պահանջվող գումարը՝ արտահայտված համարժեք եվրոյով, կիրառելով Տարադրամի փոխարժեքը՝ վճարման ենթակա հնարավոր հարկերի, մաքսային վճարների եւ տուրքերի գումարը նշելով առանձին, և

iv) յուրաքանչյուր համապատասխան դեպքում՝ կա՛մ պահանջված վճարմամբ ծածկվող՝ հանձնված Աշխատանքները նույնականացնող տվյալները, կա՛մ պահանջված վճարումը որպես կանխավճար նույնականացնող հստակ տվյալները:

բ) ապահովի եւ այդ նպատակով յուրաքանչյուր Պայմանագրում ներառի պայմաններ, որ եթե Կապալառուի վճարման՝ Պայմանագրով համաձայնեցված պայմանները ներառում են ծախսերի այնպիսի կատեգորիաներ կամ միավորներ, որոնք Կապալառուին վճարվում են փաստացի գնով, այն դեպքում, երբ Կապալառուի կողմից այդ ծախսերը չեն կատարվել եվրոյով, ապա այդպիսի ծախսերի գումարը, որոնց վճարումը պետք է պահանջվի սույն 7-րդ հոդվածի (*Դրամաշնորհի վճարումը*) համաձայն, հաշվարկվեն Կապալառուի՝ այլ արժույթով փաստացի վճարած գումարը եվրոյի փոխարկելով այն Տարադրամի փոխարժեքով,

որը կիրառելի է Կապալառուին տրամադրված համապատասխան վճարման օրը:

7.11. Ցանկացած հատկացման, այդ թվում՝ առաջին տրանշի համար Բանկն իրեն վերապահում է անհրաժեշտ համարելու դեպքում վճարման հետ կապված ցանկացած լրացուցիչ տեղեկություն կամ փաստաթուղթ պահանջելու իրավունք՝ պահանջվող գումարների թույլատրելիությունն ու վճարման ենթակա լինելը պարզելու համար: Կասկածներից զերծ մնալու համար վճարման պահանջագիրն ընդունելի չէ, եթե չեն բավարարվում սույն 7-րդ հոդվածով (*Դրամաշնորհի վճարումը*) սահմանված էական մեկ կամ մեկից ավելի պահանջներ:

7.12. Բանկը կարող է կասեցնել 7.6 եւ 7.7 հոդվածներում (*Դրամաշնորհի վճարումը*) նշված վճարման ժամկետները՝ Դրամաշնորհի շահառուին գրավոր ծանուցելով այն մասին, որ՝

ա) վճարման պահանջագրում նշված գումարը ենթակա չէ վճարման, կամ

բ) օժանդակ փաստաթղթերը չեն ներկայացվել ի բավարարումն Բանկի, կամ

գ) այն կարծում է, որ լրացուցիչ ստուգումներ, այդ թվում՝ տեղում ստուգումներ անցկացնելու կարիք ունի՝ համոզվելու համար, որ հայտարարագրված ծախսերը թույլատրելի են, կամ

դ) անհրաժեշտ է ստուգել, թե արդյոք որեւէ Պայմանագիր կնքելիս կամ իրականացնելիս տեղի են ունեցել կասկածելի կամ հաղորդված էական սխալներ, խախտումներ կամ խարդախություն, կամ

ե) Եվրոպական միությունը Բանկից պահանջում է կասեցնել ՖՎՇՀ-ի եւ Օժանդակության համաձայնագրի համաձայն իր բոլոր հատկացումները, կամ

զ) Եվրոպական հանձնաժողովը հետգանձման մասին ծանուցում է ուղարկում Բանկին՝ համաձայն ՖՎՇՀ-ի եւ Օժանդակության համաձայնագրի, կամ

է) Համաձայնագիրը դադարեցվում է՝ համաձայն ՖՎՇՀ-ի եւ Օժանդակության համաձայնագրի, կամ

ը) Եվրոպական միությունը Բանկից պահանջում է փոխանցել արդեն իսկ

Շահառուին հատկացված գումարների մի մասը կամ գումարն ամբողջությամբ՝ համաձայն ՖՎՇՀ-ի:

Այդպիսի կասեցումը տեղի է ունենում այն օրը, երբ Բանկը ծանուցում է ուղարկում Դրամաշնորհի շահառուին: Չհակասելով 23-րդ հոդվածին (*Դադարեցումը*)՝ վճարման ժամկետի ընթացքը վերսկսվում է այն օրը, երբ վճարումները կասեցնելու պատճառը, ի բավարարումն Բանկի, վերացվում է:

7.13. Դրամաշնորհի շահառուն Բանկին կամ դրա լիազորված ներկայացուցիչներին տրամադրում է կամ ապահովում է, որ Վերջնական շահառուն կտրամադրի 15.2 հոդվածում (*Ստուգումները, հսկողությունն ու աուդիտները*) նշված աջակցությունը եւ հասանելիության իրավունքները՝ 7.10 հոդվածով (*Դրամաշնորհի վճարումը*) նախատեսված ստուգումներն ու հսկողության միջոցառումներն իրականացնելու նպատակով:

7.14. Բանկի կողմից սույն 7-րդ հոդվածի (*Դրամաշնորհի վճարումը*) համաձայն հատկացումների կատարումը չի ենթադրում Բանկին Դրամաշնորհի եւ (կամ) Վերջնական շահառուի կողմից ներկայացվող վճարման պահանջագրերի հիմնավորման նպատակով վերջինիս կողմից տրամադրված փաստաթղթերի եւ տեղեկատվության, կիրառելիության դեպքում՝ կանոնավորության կամ իսկության, ամբողջականության եւ ճշգրտության ընդունում:

## ՀՈԴՎԱԾ 8.

## Թույլատրելի ծախսերը

8.1. Դրամաշնորհի շրջանակներում վճարման ենթակա համարվելու նպատակով այն ծախսերը, որոնք ընդգրկվում են 7-րդ հոդվածի (*Դրամաշնորհի վճարումը*) համաձայն Դրամաշնորհի շահառուի կողմից հատկացման մասով ներկայացված պահանջների մեջ, պետք է՝

ա) վերաբերեն այն Աշխատանքներին, որոնք իրականում կատարվում են Կապալառուի կողմից՝ համապատասխան Պայմանագրի պայմաններին համապատասխան: Որեւէ կասկածի տեղիք չտալու նպատակով հետեւյալ

ծախսերը նույնպես թույլատրելի են՝ i) ցանկացած այնպիսի օժանդակ ծառայությունների ծախսերը, որոնք սերտորեն կապված են Աշխատանքների հետ (օրինակ՝ փործարկում, գործարկում, վերջնական սպառողի ուսուցում եւ այլն) եւ ձեռք են բերվել որպես Պայմանագրերի մաս, եւ ii) ծախսերը, որոնք Վերջնական շահառուն կրել է Բանկերին տրամադրվելիք ծախսերի ստուգման վկայագրերի համար՝ համաձայն սույն Համաձայնագրի 9.4 հոդվածի.

բ) կրի Վերջնական շահառուն Կատարման ժամանակահատվածում, եւ որոնք անհրաժեշտ են Աշխատանքների իրականացման համար: Սույն Համաձայնագրի նպատակներով՝ համարվում է, որ Վերջնական շահառուն «կրել է» ծախսը, եթե Աշխատանքները կամ դրանց մի մասը, որոնց այն համապատասխանում է, իրականացվում են Կապալառուի կողմից Կատարման ժամանակահատվածում եւ ընդունվում Վերջնական շահառուի կողմից եւ թույլատրելի համարվում Բանկի կողմից՝ Դրամաշնորհի շահառուի եւ (կամ) Վերջնական շահառուի կողմից Բանկ ներկայացված՝ դրամաշնորհի միջոցով ֆինանսավորված աշխատանքների իրականացման վերաբերյալ համապատասխան գործառնական եւ ֆինանսական հաշվետվությունների հաստատումից հետո՝ այսպիսով բացառելով Կապալառուին կանխավճարի տեսքով արված որեւէ վճարում՝ 1) նախքան Կատարման ժամանակահատվածը, եթե Աշխատանքները կամ դրանց մի մասը, որոնց այն համապատասխանում է, իրականացվում են Կապալառուի կողմից Կատարման ժամանակահատվածում եւ ընդունվում Վերջնական շահառուի կողմից եւ թույլատրելի համարվում Բանկի կողմից՝ Դրամաշնորհի շահառուի եւ (կամ) Վերջնական շահառուի կողմից Բանկ ներկայացված՝ դրամաշնորհի միջոցով ֆինանսավորված աշխատանքների իրականացման վերաբերյալ համապատասխան գործառնական եւ ֆինանսական հաշվետվությունների հաստատումից հետո, եւ 2) Կատարման ժամանակահատվածում, եթե Աշխատանքները կամ դրանց մի մասը, որոնց այն համապատասխանում է, չեն իրականացվում Կապալառուի կողմից Կատարման ժամանակահատվածում եւ ընդունվում Վերջնական շահառուի կողմից եւ

թույլատրելի համարվում Բանկի կողմից՝ Դրամաշնորհի շահառուի եւ (կամ) Վերջնական շահառուի կողմից Բանկ ներկայացված՝ դրամաշնորհի միջոցով ֆինանսավորված աշխատանքների իրականացման վերաբերյալ համապատասխան գործառնական եւ ֆինանսական հաշվետվությունների հաստատումից հետո.

գ) ներառված լինեն սույն Համաձայնագրի 2-րդ հավելվածի (*Ծրագրի գնահատված ծախսերը*) Ծրագրի համաձայնեցված գնահատված բյուջեում.

դ) բավարարեն կիրառելի հարկային եւ սոցիալական օրենսդրության պահանջները.

ե) լինեն անհրաժեշտ եւ համապատասխանեն սահուն ֆինանսական կառավարման սկզբունքին, մասնավորապես՝ ֆինանսական միջոցների ռացիոնալ օգտագործման եւ ծախսարդյունավետության մասով, ինչպես նաեւ ներառվեն Կողմերի միջեւ համաձայնեցված՝ Ծրագրի բյուջեի նախահաշվում. եւ

զ) լինեն սահմանման եւ ստուգման ենթակա եւ մասնավորապես արձանագրվեն Շահառուի հաշվապահական հաշվետվություններում, սահմանվեն Հայաստանի Հանրապետությունում հաշվապահական հաշվառման կիրառելի ստանդարտներին եւ Վերջնական շահառուի որդեգրած՝ ծախսերի հաշվարկման գործելակերպերին համապատասխան:

8.2. Դրամաշնորհի շահառուն նախքան վճարման մասով որեւէ պահանջ Բանկ ներկայացնելը պետք է բավարարի կամ ապահովի, որ Վերջնական շահառուն բավարարի 8.1 հոդվածում (*Թույլատրելի ծախսերը*) նշված պայմանները:

Բացառելու նպատակով 8.1 հոդվածի (*Թույլատրելի ծախսերը*) «բ» կետի առնչությամբ որեւէ կասկած՝ Վերջնական շահառուն Պայմանագիր կնքելու նպատակով կարող էր գնումների ընթացակարգ սկսել, եւ Վերջնական շահառուի կողմից համապատասխան Կապալառուի հետ այդ Պայմանագիրը կարող էր ստորագրվել մինչեւ Կատարման ժամանակահատվածի սկիզբը՝ պայմանով, որ այն

Աշխատանքները, որոնց մասով կատարված ծախսերի համար վճարում է պահանջվում Դրամաշնորհի շրջանակներում, հանձնվում եւ ընդունվում են Վերջնական շահառուի կողմից Կատարման ժամանակահատվածում (այսպիսով բացառելով որեւէ Աշխատանք, որը կարող է հանձնվել նախքան Կատարման ժամանակահատվածը կամ դրա ավարտից հետո):

8.3. Դրամաշնորհի շահառուն պետք է ապահովի, որ Վերջնական շահառուն վարի յուրաքանչյուր Պայմանագրի կատարման եւ Դրամաշնորհի օգտագործման վերաբերյալ լիարժեք, ճշգրիտ եւ պարբերական Հաշվետվություններ այնպիսի եղանակով եւ մանրամասներով, որոնք անհրաժեշտ են եւ բավարար այն փաստը ճշգրտորեն հաստատելու համար, որ աշխատանքներն իրականացվել են, եւ որ իր կողմից Բանկ ներկայացված հաշվետվություններով սահմանված ծախսը պատշաճ կերպով կատարվել է Աշխատանքների իրականացման նպատակով եւ սույն Համաձայնագրի դրույթներին համապատասխան:

Այդպիսի հաշվետվությունները հնարավորություն են ընձեռում, որ Աշխատանքներին առնչվող եկամուտն ու ծախսերը հեշտությամբ վերահսկվեն, սահմանվեն եւ ստուգվեն եւ պահվեն Վերջնական շահառուի կողմից Դադարեցման ամսաթվին հաջորդող վեց (6) տարի ժամկետով եւ ցանկացած դեպքում, քանի դեռ սույն Համաձայնագրից կամ որեւէ Պայմանագրից ծագող կամ դրան առնչվող ցանկացած ընթացիկ աուդիտ, ստուգում, բողոքարկում, դատավարություն կամ պահանջի իրականացման հետամուտ լինելու որեւէ հարց լուծում չեն ստացել: Դրանք պետք է լինեն հեշտ հասանելի եւ ներկայացվեն այնպես, որ դրանք ուսումնասիրելը դյուրին լինի:

8.4. Դրամաշնորհի շահառուն պետք է Բանկին տրամադրի կամ պետք է ապահովի, որ Վերջնական շահառուն բանկին տրամադրի բոլոր անհրաժեշտ եւ արժանահավատ տեղեկություններն ու օժանդակ փաստաթղթերը, այդ թվում՝ 9.6 հոդվածում (*Տեղեկատվություն եւ հաշվետվություններ ներկայացնելը*) նշված՝ աուդիտի ենթարկված ֆինանսական ծախսերի ամփոփագրերը, որպեսզի Բանկը համոզվի, որ Դրամաշնորհով համաֆինանսավորված ցանկացած Աշխատանք

կատարվել է, եւ որ Վերջնական շահառուի կողմից Աշխատանքների մասով հայտարարագրված ծախսերն իրականում վճարվել են եւ համապատասխանում են Դրամաշնորհի տրամադրման եւ օգտագործման պայմաններին:

8.5. Որեւէ կասկածի տեղիք չտալու նպատակով Հատկացումների հաշվեհամարի օգտագործման համար բանկի կողմից կատարվող բոլոր գանձումները համարվում են Դրամաշնորհի շրջանակներում վճարման ոչ ենթակա եւ իրականցվում են Դրամաշնորհի շահառուի եւ (կամ) Վերջնական շահառուի կողմից՝ կախված իրավիճակից:

## ՀՈԴՎԱԾ 9.

## Տեղեկատվություն եւ հաշվետվություններ ներկայացնելը

9.1. Դրամաշնորհի շահառուն Աշխատանքների տրամադրման հարցում պետք է մշտապես համագործակցի կամ ապահովում է, որ Վերջնական շահառուն համագործակցի Բանկի եւ Կապալառուների հետ: Մասնավորապես Շահառուն պետք է ներդնի կամ ապահովում է, որ Վերջնական շահառուն ներդնի իր ամբողջ ջանքերը՝ ապահովելու, որ Կապալառուների աշխատակիցներն ու վերջիններիս խնամքի տակ գտնվող անձինք ձեռք բերեն վիզաներ եւ թույլտվություններ, այդ թվում՝ աշխատանքի եւ բնակության թույլտվություններ՝ Հայաստանի Հանրապետությունում կիրառվող օրենքներին համապատասխան՝ նկատի ունենալով այն, որ Դրամաշնորհի շահառուն եւ (կամ) Վերջնական շահառուն նրանց ծախսերը հոգալու մասով որեւէ պարտավորություն չեն կրում, եւ որ վիզա ստանալու համար դիմում, ինչպես նաեւ դրան կից օժանդակ փաստաթղթեր Հայաստանի Հանրապետության՝ վիզա տրամադրող մարմին ներկայացնելու պատասխանատվությունը կրում են բացառապես Կապալառուները:

9.2. Դրամաշնորհի շահառուն Բանկին սույն Համաձայնագրի իրականացման եւ Աշխատանքների կատարման վերաբերյալ լիարժեք տեղեկատվություն է տրամադրում կամ ապահովում է, որ այն տրամադրվի

Վերջնական շահառուի կողմից: Այդ նպատակով Դրամաշնորհի շահառուն տրամադրում է կամ ապահովում է, որ Վերջնական շահառուն տրամադրի (կիրառելիության դեպքում) տարեկան կտրվածքով ներկայացվող՝ առաջընթացի վերաբերյալ հաշվետվություններ եւ իրականացման վերաբերյալ վերջնական հաշվետվություն՝ բաղկացած նկարագրական եւ ֆինանսական բաժիններից: Հաշվետվությունները կազմվում են անգլերենով, իսկ ֆինանսական տեղեկատվությունը ներկայացվում է եվրոյով: Հաշվետվություններից յուրաքանչյուրը պետք է ունենա Բանկին բավարարող ձեւ եւ բովանդակություն:

9.3. Տարեկան կտրվածքով ներկայացվող՝ առաջընթացի վերաբերյալ յուրաքանչյուր հաշվետվություն պետք է ամբողջական հաշվետվություն տրամադրի տասներկու (12) ամիսների հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Ծրագրի ձեռքբերումների եւ այդ ժամանակաշրջանի վերջի կարգավիճակի մասին:

Նկարագրական բաժինը պետք է բաղկացած լինի առնվազն հետեւյալից.

ա) գնումների մասով ընթացիկ որեւէ գործունեության վիճակ.

բ) [2]Աշխատանքների եւ Պայմանագրերի առաջընթացի վերաբերյալ տվյալներ.

գ) շրջակա միջավայրին ու սոցիալական հարցերին վերաբերող թարմացված տվյալներ.

դ) ոլորտային ընթացիկ բարեփոխումների վերաբերյալ թարմացված տվյալներ, եթե այդպիսիք կան.

ե) շահագործման հետ կապված ցանկացած լուրջ մարտահրավեր եւ դրա հաղթահարման նպատակով ձեռնարկված միջոցառումներ, Ծրագրի իրականացման մասով ցանկացած փոփոխություն.

զ) Ծրագրում Եվրոպական միության ունեցած ներդրման տեսանելիության ապահովմանն ուղղված ցանկացած հաղորդակցական գործունեություն եւ ձեռնարկված միջոցառում.

է) ըստ աշխատանքների բաղադրիչի բաշխված Դրամաշնորհի օգտագործման նկարագիր.

ը) աշխատանքային պլան եւ հաջորդող տասներկու (12) ամիսների համար կանխատեսվող դրամական հոսքեր.

թ) Ծրագիրն ամբողջությամբ ավարտելու ամսաթվի եւ Ծրագրի գնահատված վերջնական ծախսերի վերաբերյալ թարմացված տվյալներ. եւ

ժ) թարմացված տվյալներ՝ առաջընթացը բնորոշող ցուցանիշների վերաբերյալ, եթե տվյալ փուլում դա հնարավոր է չափել. հիմնական ցուցանիշները, որոնք մոնիթորինգի են ենթարկվելու Ծրագրի մակարդակով, թվարկված են 5-րդ հավելվածում (*Առաջընթացը բնորոշող ցուցանիշներ*):

Ֆինանսական բաժինը բաղկացած է հետեւյալից.

i) թարմացված ֆինանսավորման պլան (այդ թվում՝ ամենավերջին հասանելի թվային տվյալները).

ii) հատկացումների մասով արված թարմ կանխատեսումներ. եւ

iii) ծախսերի ամփոփագիր, որում թվարկված են հաշվետվությունն ընդգրկող ժամանակահատվածում կատարված՝ 8-րդ հոդվածին (*Թույլատրելի ծախսերը*) համապատասխան սահմանված թույլատրելի այն ծախսերը, որոնց մասով Դրամաշնորհից վճարման պահանջներ են ներկայացվել կատարված ծախսի արժույթով, եւ 7.7 հոդվածին (*Դրամաշնորհի վճարումը*) համապատասխան հաշվարկված՝ եվրոյին համարժեք գումարի չափով, եւ որում մատնանշված են նաեւ յուրաքանչյուր առանձին ծախսի անվանումը, չափը, 2-րդ հավելվածում (*Ծրագրի գնահատված ծախսերը*) նշված ծախսի համապատասխան կատեգորիան եւ դա հիմնավորող փաստաթուղթը:

Հատկացումների մասով կանխատեսումների էական փոփոխության դեպքում Դրամաշնորհի շահառուն Բանկ է ուղարկում կամ ապահովում է, որ Վերջնական շահառուն Բանկ ուղարկի թարմացված կանխատեսումներ: Եթե Դրամաշնորհի շահառուն կամ Վերջնական շահառուն որոշի, որ կանխատեսվող բյուջեն եւ դրա

հիման վրա Բանկի կողմից արդեն վճարված նախնական ֆինանսավորման գումարը ցանկացած տասներկու (12) ամիս ժամանակահատվածի համար կարող է բավարար չլինել այդ տասներկու (12) ամիս ժամանակահատվածի մնացած մասի համար Ծրագրի կարիքները հոգալու համար, ապա այս թարմացված կանխատեսմանը պետք է կցվի ֆինանսական ամփոփաթերթ, որը ցույց կտա հետագա նախնական ֆինանսավորման անհրաժեշտությունը (ցույց տալով, որ անմիջապես նախորդող հատկացման 75%-ը եւ մնացած բոլոր հատկացումների 100%-ը Վերջնական շահառուի կողմից արդյունավետորեն օգտագործվել են Ծրագրի իրականացման համար կամ ենթակա են ներառման Կապալառուների հետ իրավական պարտավորություններում):

9.4. Իրականացման վերաբերյալ վերջնական հաշվետվությամբ տրամադրվում է իրականացված գործողությունների, Ծրագրի արդյունքների եւ ազդեցության վերաբերյալ մանրակրկիտ նկարագրություն, որն ընդգրկում է իրականացման ամբողջ ժամանակահատվածը:

Նկարագրական բաժինը բաղկացած է առնվազն հետեւյալի վերաբերյալ տեղեկություններից.

i) գնումների մասով գործունեություն.

ii) Աշխատանքներ եւ Պայմանագրեր.

iii) շրջակա միջավայրին վերաբերող եւ սոցիալական հարցեր.

ժա) ընթացիկ ցանկացած բարեփոխումների վիճակ, եթե այդպիսին առկա է.

iv) շահագործման հետ կապված ցանկացած լուրջ մարտահրավեր եւ դրա հաղթահարման նպատակով ձեռնարկված միջոցառումներ, Ծրագրի իրականացման մասով ցանկացած փոփոխություն.

v) Ծրագրում Եվրոպական միության ունեցած ներդրման տեսանելիության ապահովմանն ուղղված ցանկացած հաղորդակցական գործունեություն եւ ձեռնարկված միջոցառում.

vi) ըստ աշխատանքների բաղադրիչի բաշխված՝ Դրամաշնորհի եւ ծրագրի ֆինանսավորման այլ աղբյուրների օգտագործման նկարագիր.

vii) Առաջընթացը բնորոշող ցուցանիշների ձեռքբերում (տե՛ս 9.3 հոդվածը):

Ֆինանսական բաժինը բաղկացած է հետեւյալից.

i) ֆինանսավորման վերջնական պլան.

ii) ծախսերի ամփոփագիր, որում թվարկված են ծրագրի իրականացման ժամանակահատվածում կատարված՝ 8-րդ հոդվածին (*Թույլատրելի ծախսերը*) համապատասխան սահմանված թույլատրելի այն ծախսերը, որոնց մասով Դրամաշնորհից վճարման պահանջներ են ներկայացվել կատարված ծախսի արժույթով, եւ 7.7 հոդվածին (*Դրամաշնորհի վճարումը*) համապատասխան հաշվարկված՝ եվրոյին համարժեք գումարի չափով, եւ որում մատնանշված են նաեւ յուրաքանչյուր առանձին ծախսի անվանումը, չափը, 2-րդ հավելվածում (*Ծրագրի գնահատված ծախսերը*) նշված ծախսի համապատասխան կատեգորիան եւ դա հիմնավորող փաստաթուղթը:

9.5. Տարեկան կտրվածքով ներկայացվող առաջընթացի վերաբերյալ հաշվետվությունները Բանկ պետք է ներկայացվեն ոչ ուշ, քան յուրաքանչյուր տարվա հունվարի 31-ը: Իրականացման վերաբերյալ վերջնական հաշվետվությունը պետք է Բանկ ներկայացվի ոչ ուշ, քան Կատարման ժամանակահատվածի ավարտից 5 (հինգ) ամիս հետո:

9.6. Դրամաշնորհի շահառուն ամեն տարի տրամադրում է կամ ապահովում է, որ Վերջնական շահառուն տրամադրի նախորդ օրացուցային տարվա ծախսերի՝ արտաքին աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունը: Այդպիսի ֆինանսական հաշվետվությունն աուդիտի է ենթարկվում Բանկի կողմից Դրամաշնորհի շահառուին տրամադրված տեխնիկական առաջադրանքի համաձայն Բանկի կողմից նախնական գրավոր համաձայնությամբ ընտրված

անկախ արտաքին աուդիտորի կողմից եւ հաստատվում է Բանկի կողմից: Այն ներկայացվում է յուրաքանչյուր տարվա փետրվարի 28-ից (կամ փետրվարի 29-ից՝ կախված տարվանից) ոչ ուշ, իսկ առաջին անգամ՝ ամենաուշը մինչեւ 2024 թվականի փետրվարի 29-ը: Աուդիտորն ուսումնասիրում է, թե արդյոք հայտարարագրված եւ 7-րդ հոդվածի (*Դրամաշնորհի վճարումը*) համաձայն Դրամաշնորհից վճարման համար պահանջվող ծախսերն իրական, ճշգրտորեն արձանագրված եւ թույլատրելի են սույն Համաձայնագրին համապատասխան: Դրամաշնորհի շահառուն լիարժեք համագործակցում է կամ ապահովում է, որ Վերջնական շահառուն լիարժեք համագործակցի արտաքին աուդիտորի հետ եւ աջակցում կամ ապահովում է, որ Վերջնական շահառուն աջակցի վերջինիս աշխատանքներին:

9.7. Բոլոր հաշվետվությունները Դրամաշնորհի շահառուի կամ Վերջնական շահառուի կողմից Բանկին տրամադրվում են թղթային եւ էլեկտրոնային տարբերակներով:

9.8. Եթե Դրամաշնորհի շահառուն մինչեւ 9.3 հոդվածում (*Տեղեկատվություն եւ հաշվետվություններ ներկայացնելը*) նշված վերջնաժամկետների լրանալը Բանկին չի տրամադրում կամ չի ապահովում, որ Վերջնական շահառուն տրամադրի պահանջվող հաշվետվություններից որեւէ մեկը եւ չի տրամադրում ընդունելի եւ բավարարող գրավոր բացատրություն այն մասին, թե ինչու չի կարող կատարել այդ պարտավորությունը, ապա Բանկը կարող է 23-րդ հոդվածի (*Դադարեցումը*) դրույթներին համապատասխան դադարեցնել Համաձայնագրի գործողությունը եւ գանձել սույն Համաձայնագրով Դրամաշնորհից արդեն իսկ հատկացված եւ չհիմնավորված գումարները, այդ թվում՝ գանձումներ կատարելու մասով իր իրավունքները 22-րդ հոդվածին (*Իրավունքների փոխանցումը*) համապատասխան Եվրոպական հանձնաժողովին փոխանցելու միջոցով:

9.9. Դրամաշնորհի շահառուն Բանկին անհապաղ տեղեկացնում է կամ ապահովում է, որ Վերջնական շահառուն Բանկին անհապաղ տեղեկացնի ցանկացած այնպիսի հանգամանքի մասին, որը կարող է խաթարել կամ ձգձգել

Աշխատանքների իրականացումը:

9.10. Բանկը կարող է Դրամաշնորհի շահառուի կամ Վերջնական շահառուի կողմից սույն 9-րդ հոդվածի (*Տեղեկատվություն եւ հաշվետվություններ ներկայացնելը*) համաձայն ներկայացված ցանկացած հաշվետվության վերաբերյալ պարզաբանումներ, փոփոխությունների կատարում, լրացուցիչ տեղեկատվություն կամ փաստաթղթեր պահանջել, որոնք Դրամաշնորհի շահառուի կամ Վերջնական շահառուի կողմից պետք է տրամադրվեն այդպիսի պահանջ ներկայացվելուց հետո՝ տասնհինգ (15) օրացուցային օրվա ընթացքում:

9.11. Դրամաշնորհի շահառուն Բանկին անմիջապես տեղեկացնում է կամ ապահովում է, որ Վերջնական շահառուն Բանկին անմիջապես տեղեկացնի (կիրառելիության դեպքում)՝

i) իրական պնդման կամ բողոքի կամ որեւէ Արգելված վարքագծի վերաբերյալ տեղեկությունների կամ Ծրագրի հետ կապված որեւէ պատժամիջոցի վերաբերյալ,

ii) եթե նա տեղյակ լինի որեւէ փաստի կամ տեղեկության մասին, որով հաստատվում կամ հիմնավոր կերպով ենթադրվում է, որ՝ ա) տեղի է ունեցել Ծրագրի հետ կապված Արգելված վարքագծի որեւէ դրսեւորում, կամ բ) իր բաժնետիրական կապիտալում կամ Ծրագրում ներդրված միջոցներից որեւէ մեկն ունի ապօրինի ծագում,

iii) սույն Համաձայնագրի ներքո կամ դրա հետ կապված ներկայացված հավաստիացումների եւ երաշխիքների ցանկացած խախտման մասին,

iv) ցանկացած պահանջի, հայցի, վարույթի, պաշտոնական ծանուցման կամ քննության մասին, որը կապված է Դրամաշնորհի շահառուին, Վերջնական շահառուին կամ որեւէ Համապատասխան անձի առնչվող ցանկացած պատժամիջոցի հետ,

v) եթե օրենքով արգելված չէ, ապա դատարանի, վարչական մարմնի կամ

համանման պետական մարմնի կողմից իրականացվող որեւէ նյութական դատավարության, արբիտրաժի, վարչական վարույթի կամ քննության մասին, որը, որքանով տեղյակ է, ընթացքի մեջ է, մոտենում է ավարտին կամ քննվում է Դրամաշնորհի շահառուի կամ Վերջնական շահառուի կամ նրանց վերահսկող սուբյեկտների կամ Դրամաշնորհի շահառուի կամ Վերջնական շահառուի կառավարման մարմինների անդամների դեմ Դրամաշնորհի կամ Ծրագրի հետ կապված Արգելված վարքագծի առնչությամբ գործերով,

vi) Դրամաշնորհի շահառուի եւ (կամ) Վերջնական շահառուի կողմից ձեռնարկվող ցանկացած միջոցի մասին, որն արգելված է սույն Համաձայնագրի 17-րդ հոդվածով (*Բարեվարքության հանձնառությունը*), եւ սահմանի այս հարցերի առնչությամբ ձեռնարկվող գործողությունները:

9.12. Դրամաշնորհի շահառուն Բանկին տրամադրում է կամ ապահովում է, որ Վերջնական շահառուն Բանկին տրամադրի ցանկացած այդպիսի տեղեկություն կամ լրացուցիչ փաստաթուղթ, որը վերաբերում է Ծրագրի ֆինանսավորմանը, գնումներին, իրականացմանը, գործարկմանը, ինչպես նաեւ Շրջակա միջավայրին եւ սոցիալական հարցերին, ինչպես Բանկը կարող է ողջամտորեն պահանջել ողջամիտ ժամկետում՝ պայմանով, որ եթե այդ տեղեկությունները կամ փաստաթուղթը ժամանակին չտրամադրվի Բանկին, եւ եթե Դրամաշնորհի շահառուն Բանկի կողմից գրավոր սահմանված ողջամիտ ժամկետում չշտկի բացթողումը, ապա Բանկը կարող է հնարավորության սահմաններում վերացնել թերությունը՝ աշխատանքի ընդունելով իր աշխատակազմին կամ խորհրդատու կամ որեւէ այլ երրորդ կողմ Դրամաշնորհի շահառուի հաշվին, իսկ Դրամաշնորհի շահառուն պետք է այդ անձանց տրամադրի այդ նպատակով անհրաժեշտ ամբողջ օգնությունը:

## ՀՈԴՎԱԾ 10.

## Արդյունքների նկատմամբ իրավունքները եւ մտավոր սեփականության իրավունքները

10.1. Հաշվի առնելով որեւէ անհատի կամ իրավաբանական անձի, այդ թվում՝ Կողմերից որեւէ մեկի մտավոր սեփականության նախապես գոյություն ունեցող իրավունքները՝ Կապալառուների կողմից պայմանագրերի կատարման ընթացքում հավաքված կամ պատրաստված նոր նյութերի, այդ թվում՝ բոլոր հաշվետվությունների, համապատասխան տվյալների ու այնպիսի տեղեկությունների նկատմամբ մտավոր սեփականության իրավունքները, ինչպիսիք են քարտեզները, սխեմաները, պլանները, տվյալների բազաները, այլ փաստաթղթեր եւ ծրագրային ապահովում, լրացուցիչ հաշվետվությունները եւ նյութերը պատկանում են Վերջնական շահառուին:

10.2. Չհակասելով 10.1 հոդվածին (*Արդյունքների նկատմամբ իրավունքները եւ մտավոր սեփականության իրավունքները*) եւ հաշվի առնելով գաղտնիության վերաբերյալ կիրառելի պահանջները՝ Դրամաշնորհի շահառուն ապահովում է, որ Վերջնական շահառուն շնորհի Բանկին եւ Եվրոպական հանձնաժողովին մտավոր սեփականության ցանկացած նոր իրավունքի մասով անվերադարձ, ոչ բացառիկ, անհատույց եւ անժամկետ լիցենզիա՝ ենթալիցենզավորման իրավունքով: Մասնավորապես Բանկը եւ Եվրոպական հանձնաժողովը սույն Համաձայնագրից եւ Պայմանագրերից բխող բոլոր փաստաթղթերը, ներառյալ՝ 9-րդ հոդվածի (*Տեղեկատվություն եւ հաշվետվություններ ներկայացնելը*) համաձայն կազմված հաշվետվությունները ազատորեն օգտագործելու, այդ թվում՝ պահպանելու, փոփոխելու, թարգմանելու, ցուցադրելու, ցանկացած տեխնիկական եղանակով վերարտադրելու, հրապարակելու կամ ցանկացած կրիչով փոխանցելու իրավունք ունեն՝ անկախ դրանց տեսակից: Այդ նպատակով Դրամաշնորհի շահառուն ապահովում է, որ Վերջնական շահառուն իրավունք ունենա օգտվելու նախապես գոյություն ունեցող մտավոր սեփականության համապատասխան իրավունքներից, այդ թվում՝ 10-րդ հոդվածով (*Արդյունքների նկատմամբ իրավունքները եւ մտավոր սեփականության իրավունքները*) նախատեսված՝ լիցենզիան շնորհելու իրավունքից:

10.3. Այն դեպքում, երբ սույն Համաձայնագրի կատարման առնչությամբ արված լուսանկարում կամ նկարահանված ֆիլմում ճանաչված անձ է պատկերված,

Դրամաշնորհի շահառուն ապահովում է, որ Վերջնական շահառուն ներառի Բանկին 9-րդ հոդվածին (*Տեղեկատվություն եւ հաշվետվություններ ներկայացնելը*) համապատասխան ներկայացվող իրականացման վերաբերյալ վերջնական հաշվետվությունում այդ անձի՝ իր պատկերի այդպիսի օգտագործումը թույլատրող հայտարարությունը՝ նկատի ունենալով այն, որ այդ պահանջը չի կիրառվում հանրային վայրերում արված լուսանկարների կամ նկարահանված ֆիլմերի դեպքում, երբ հասարակության այս կամ այն անդամը ենթակա է նույնականացման միայն հիպոթետիկորեն, կամ այն դեպքում, երբ հանրային անձանց մասնակցությամբ արվել են այնպիսի լուսանկարներ, կամ նկարահանվել են այնպիսի ֆիլմեր, որտեղ նրանք գործում են իրենց հանրային կարգավիճակին համապատասխան:

10.4. Դրամաշնորհի շահառուն ապահովում է, որ Վերջնական շահառուն յուրաքանչյուր Պայմանագրում ներառի այնպիսի դրույթներ, որոնցով Կապալառուից պահանջվում է անհրաժեշտության դեպքում կատարել 10-րդ հոդվածում (*Արդյունքների նկատմամբ իրավունքները եւ մտավոր սեփականության իրավունքները*) նշված պարտավորությունները:

10.5. Այն սարքավորումներն ու նյութական միջոցները, որոնց ձեռքբերման համար վճարումներն իրականացվել են Դրամաշնորհից, համարվում են Վերջնական շահառուի գույքը: Այդպիսի գույքի փաստաթղթային ապացույցները 8.3 հոդվածում (*Թույլատրելի ծախսերը*) նշված փաստաթղթերի հետ միասին պահվում են ստուգման համար:

## ՀՈԴՎԱԾ 11.

### Տեսանելիությունը եւ թափանցիկությունը

11.1. Դրամաշնորհի շահառուն մշտապես համագործակցում է եւ ապահովում, որ Վերջնական շահառուն մշտապես համագործակցի Բանկի եւ Կապալառուների հետ, եւ համակարգում է Աշխատանքների մասով պլանավորված եւ իրականացված հաղորդակցության եւ տեսանելիության գործողությունները: Այդ նպատակով Դրամաշնորհի շահառուն առաջնորդվում է եւ ապահովում, որ

Վերջնական շահառուն առաջնորդվի «ԵՄ կողմից ֆինանսավորվող ծրագրերի համար ԵՄ հաղորդակցության եւ տեսանելիության ձեռնարկ»[2]-ով, ինչպես նաեւ ԵՆԲ-ի լոգոտիպերի օգտագործման ուղեցույցով եւ (կամ) այս Ծրագրի համար մշակված որեւէ այլ հաջորդող փաստաթղթով եւ (կամ) հատուկ հաղորդակցման ռազմավարությամբ (պլանով):

11.2. Դրամաշնորհի շահառուն փաստաթղթավորում եւ զեկուցում է եւ ապահովում, որ Վերջնական շահառուն փաստաթղթավորի եւ զեկուցի Աշխատանքների մասով իրականացված հաղորդակցության եւ տեսանելիության բոլոր գործողությունների մասին:

11.3. Դրամաշնորհի շահառուն ձեռնարկում է եւ ապահովում, որ Վերջնական շահառուն ձեռնարկի բոլոր համապատասխան միջոցները, որպեսզի Եվրոպական միությունից Ծրագրի եւ Պայմանագրերի մասով ֆինանսավորում ստանալու փաստը հրապարակվի: Լրատվամիջոցներին, Կապալառուներին տրամադրված տեղեկություններով, բոլոր առնչվող հրապարակված նյութերով, պաշտոնական ծանուցումներով, հաշվետվություններով ու հրապարակումներով պետք է հաստատվի այն փաստը, որ Ծրագիրը եւ Պայմանագրերն իրականացվել են «Եվրոպական միության ֆինանսավորմամբ», ինչպես նաեւ պատշաճ ձեւով պետք է ցուցադրվեն Միության խորհրդանշանը, ինչպես նաեւ Բանկի լոգոտիպը:

11.4. Եթե սարքավորումները կամ տրանսպորտային միջոցներն ու հիմնական նյութական միջոցները ձեռք են բերվել ԵՄ-ի կողմից տրամադրված միջոցների հաշվին, ապա Դրամաշնորհի շահառուն ապահովում է, որ Վերջնական շահառուն ներառի Կապալառուներից այդ տրանսպորտային միջոցների, սարքավորումների եւ հիմնական նյութական միջոցների ստացման վերաբերյալ պաշտոնական հայտարարություններ, ինչպես նաեւ ապահովի ԵՄ-ի եւ Բանկի տեսանելիությունը բացօթյա գովազդի միջոցով (ցուցադրել ծրագրի վերաբերյալ վահանակներ,

[2] https://ec.europa.eu/international-partnerships/system/files/communication-visibility-requirements-2018_en.pdf

գովազդային վահանակներ, հուշատախտակներ եւ այլն):

11.5. Կողմերը համաձայն են Բանկին, Եվրոպական հանձնաժողովին եւ Եվրոպական միության պատվիրակությանը սույն Համաձայնագրի գործողության ժամկետի ընթացքում հրավիրել Հայաստանի Հանրապետություն՝ մասնակցելու սույն Համաձայնագրի, Պայմանագրերի կամ Ծրագրի առնչությամբ իրենց կողմից կազմակերպվող միջոցառումներից ցանկացածին եւ բոլորին: Այդ միջոցառումները կարող են ներառել Կողմերի միջեւ պարբերաբար տեղի ունեցող կամ տեխնիկական բնույթի աշխատանքային հանդիպումներ Դրամաշնորհից օժանդակություն ստացող Ծրագրի շրջանակներում:

11.6. Բարձր մակարդակի այցեր պլանավորված լինելու դեպքում Կողմերը միմյանց տեղեկացնում են այդ մասին եւ քննարկում այդ այցերը համակարգելու եւ համատեղ ուղերձների շուրջ համաձայնության գալու հարցերը:

11.7. Դրամաշնորհի շահառուն ապահովում է, որ Վերջնական շահառուն յուրաքանչյուր Պայմանագրում ներառի այնպիսի դրույթներ, որոնցով Կապալառուից պահանջվում է հարգել 11.1 հոդվածում (*Տեսանելիությունը եւ թափանցիկությունը*) նշված՝ տեսանելիությանը ներկայացվող պահանջները, ինչպես նաեւ յուրաքանչյուր հաշվետվությունում կամ նրա կողմից ներկայացվող որեւէ այլ փաստաթղթում ներառել հետեւյալ տեքստերը.

ա) «*Սույն փաստաթուղթը մշակվել է Եվրոպական միության կողմից տրամադրված ֆինանսական աջակցությամբ՝ Հարեւանության ներդրումային ծրագրի շրջանակներում եւ Եվրոպական միության ընդհանուր բյուջեի միջոցով:*».

բ) «Պատասխանատվությունից հրաժարում. *Սույն հաշվետվության բովանդակության մասով ողջ պատասխանատվությունը կրում են հեղինակները: Սույն փաստաթղթում ներկայացված տեսակետները պարտադիր չէ, որ արտացոլեն Եվրոպական միության կամ Եվրոպական ներդրումային բանկի տեսակետները: Եվրոպական միությունը, Եվրոպական ներդրումային բանկը, դրանց անդամները, ղեկավար մարմինները, աշխատակիցները կամ*

*ներկայացուցիչները որեւէ պարտավորություն չեն կրում տեղեկատվության մեկնաբանությունից կամ օգտագործումից, սույն փաստաթղթում պարունակվող տեսակետների վրա հիմնվելուց կամ սույն հաշվետվության մեջ ներկայացված արդյունքների կամ մեթոդների՝ երրորդ կողմի կողմից օգտագործումից բխող որեւէ կորստի կամ վնասի համար:* »:

11.8. Դրամաշնորհի շահառուն Բանկին 9-րդ հոդվածին (*Տեղեկատվություն եւ հաշվետվություններ ներկայացնելը*) համապատասխան ներկայացվող պարբերական հաշվետվություններում ներառում է եւ ապահովում, որ Վերջնական շահառուն (կիրառելիության դեպքում) ներառի Եվրոպական միության ֆինանսական աջակցության տեսանելիությունն ապահովելու նպատակով իրականացված միջոցառումների վերաբերյալ տեղեկատվություն եւ Բանկին տրամադրում է ընթացիկ աշխատանքների եւ իրավիճակի վերաբերյալ հաշվետվություններ, հրապարակումներ, մամուլի հաղորդագրություններ եւ սույն Համաձայնագրի վերաբերյալ այլ թարմ տեղեկություններ՝ դրանք հրապարակվելուն պես:

11.9. Հաշվի առնելով գաղտնիության, անձնական տվյալների անվտանգության ու պաշտպանության վերաբերյալ կիրառելի կանոնները՝ Դրամաշնորհի շահառուն լիազորում է եւ ապահովում, որ Վերջնական շահառուն լիազորի Բանկին եւ Եվրոպական հանձնաժողովին տարեկան կտրվածքով հրապարակել սույն Համաձայնագրի վերաբերյալ հետեւյալ տեղեկությունները. սույն Համաձայնագրի եւ Ծրագրի անվանումը, բնույթն ու նպատակը, Դրամաշնորհի շահառուի եւ Վերջնական շահառուի անվանումը, հասցեն եւ երկիրը եւ Դրամաշնորհի առավելագույն գումարը:

11.10. Եթե Դրամաշնորհի շահառուն եւ (կամ) Վերջնական շահառուն իրենց կայքում սույն Համաձայնագրի կամ Պայմանագրերի վերաբերյալ որեւէ տեղեկություն են հրապարակում, ապա Դրամաշնորհի շահառուն, կախված իրավիճակից, Բանկին տրամադրում է եւ ապահովում, որ Վերջնական շահառուն Բանկին տրամադրի այդ կայքի հասցեն՝ դրանով Բանկին լիազորություն տալով

այդ հասցեն հրապարակելու Բանկի կայքում:

**Հոդված 12.**

**Շահերի բախումը**

12.1. Դրամաշնորհի շահառուն պարտավորվում է ձեռնարկել եւ ապահովում է, որ Վերջնական շահառուն ձեռնարկի բոլոր անհրաժեշտ նախազգուշական միջոցները՝ սույն Համաձայնագրից բխող կամ դրա առնչությամբ առկա շահերի բախումը կանխելու, մեղմելու կամ վերացնելու նպատակով: Շահերի բախում տեղի է ունենում այն դեպքում, երբ վտանգվում է սույն Համաձայնագիրն իրականացնող ցանկացած անձի գործառույթների անաչառ եւ օբյեկտիվ իրականացումը i) այնպիսի պատճառներով, որոնք կապված են ընտանեկան, հուզական կյանքի, քաղաքական հայացքների կամ ազգային պատկանելության, տնտեսական շահերի կամ մեկ այլ երրորդ կողմի հետ որեւէ այլ ընդհանուր շահերի հետ կամ ii) այդ անձի՝ իր գործատուի նկատմամբ որպես անձնակազմի անդամ կրած պարտականությունների եւ առաջադրանքների ուժով: Դրամաշնորհի շահառուն սույն Համաձայնագրի գործողության ժամկետի ընթացքում Բանկին անհապաղ տեղեկացնում է եւ ապահովում, որ վերջնական շահառուն Բանկին անհապաղ տեղեկացնի այդպիսի բախման հանգեցնող կամ դրան հանգեցնելու հավանականություն ունեցող ցանկացած իրավիճակի մասին:

12.2. Բանկին իրավունք է վերապահվում ստուգելու Դրամաշնորհի շահառուի կամ Վերջնական շահառուի կողմից շահերի բախումը կանխելու, մեղմելու կամ վերացնելու նպատակով ձեռնարկված ցանկացած միջոցառման համարժեքությունը, իսկ անհրաժեշտության դեպքում նրա պահանջով կարող են ձեռնարկվել լրացուցիչ միջոցառումներ:

12.3. Դրամաշնորհի շահառուի կողմից սույն հոդվածով սահմանված պարտավորությունները չկատարվելու դեպքում Բանկը կարող է 23-րդ հոդվածի (*Դադարեցումը*) դրույթներին համապատասխան դադարեցնել սույն Համաձայնագրի գործողությունը:

12.4. Դրամաշնորհի շահառուն ապահովում է, որ Վերջնական շահառուն

յուրաքանչյուր Պայմանագրում ներառի դրույթներ, որոնք Կապալառուից պահանջում են համապատասխանել սույն 12-րդ հոդվածում (*Շահերի բախումը*) շարադրված ցանկացած պարտավորության կամ լրացուցիչ միջոցներին:

## ՀՈԴՎԱԾ 13.

### Գաղտնիությունը

13.1. Կողմերը երաշխավորում են, որ Գաղտնի տեղեկատվության կամ որեւէ Գաղտնի տեղեկատվություն պարունակող կամ դրան առնչվող բոլոր փաստաթղթերի նկատմամբ արդյունավետ հսկողություն կսահմանեն՝ կիրառելով զգուշավորության այն չափանիշները, որոնք իրենք կիրառում են իրենց սեփական գաղտնի տեղեկատվության գաղտնիությունն ապահովելու նպատակով, եւ որ իրենք չեն օգտագործի կամ վերարտադրի որեւէ Գաղտնի տեղեկատվություն պարունակող կամ դրան առնչվող որեւէ փաստաթուղթ, որեւէ անձի թույլ չեն տա օգտագործել կամ վերարտադրել այդպիսի փաստաթուղթ՝ բացառությամբ այնքանով, որքանով դա անհրաժեշտ է վերջինիս իրավունքները կամ պարտավորությունները սույն Համաձայնագրի ժամկետներին եւ պայմաններին համապատասխան իրականացնելու հնարավորություն ընձեռելու նպատակով, կամ եթե առկա է Գաղտնի տեղեկատվության սեփականատիրոջ կողմից նախապես տրված գրավոր համաձայնություն:

13.2. 13.1 հոդվածում (*Գաղտնիությունը*) նշված պարտավորությունները չեն համարվում խախտված այնքանով, որքանով՝

ա) Գաղտնի տեղեկատվության բացահայտումը կամ դրա հասանելիությունը թույլատրվում կամ պահանջվում է օրենքով կամ որեւէ կանոնով, կարգավորմամբ կամ միջազգային պայմանագրով կամ գործով համապատասխան իրավազորություն ունեցող դատարանի ակտով, որոնք կիրառելի են բացահայտող Կողմի նկատմամբ.

բ) Կողմը Գաղտնի տեղեկատվությունը բացահայտում է, որ պաշտպանի իր

շահերը ցանկացած դատավարության կամ արբիտրաժային վարույթի ընթացքում, որի կողմ է նա.

գ) Գաղտնի տեղեկատվությունը բացահայտվում է, կամ դրա հասանելիությունն ապահովվում է 15-րդ հոդվածում (*Սպուգումները, հսկողությունն ու աուդիտները*) նշված պարտավորությունների համաձայն.

դ) Գաղտնի տեղեկատվությունը Օժանդակության համաձայնագրին համապատասխան Բանկի կողմից բացահայտվում է Եվրոպական հանձնաժողովի կամ ԵՄ այլ մարմնի համար.

ե) Դրամաշնորհի շահառուի կողմից գաղտնի համարվող տեղեկատվությունը Բանկի՝ թափանցիկության ապահովման քաղաքականության համաձայն հասանելի է պահանջի դեպքում, կամ դրա համառոտ տարբերակը հրապարակվում է Բանկի կայքում:

13.3. Եթե որեւէ Կողմ 13.2 հոդվածի (*Գաղտնիությունը*) համաձայն, բացառությամբ դրա «ե» կետի, Գաղտնի տեղեկատվությունը բացահայտում է որեւէ երրորդ կողմի համար, ապա բացահայտող Կողմը ստացող երրորդ կողմին ծանուցում է այն մասին, որ տեղեկատվությունը համարվում է Գաղտնի տեղեկատվություն:

13.4. Եթե որեւէ Կողմ 13.2 հոդվածի (*Գաղտնիությունը*) «գ» կետի համաձայն Գաղտնի տեղեկատվություն է բացահայտում որեւէ երրորդ կողմի համար, ապա այդ Կողմը տեղեկատվությունը բացահայտելու որեւէ պահանջի մասին տեղեկանալուց անմիջապես հետո դրա մասին գրավոր ծանուցում է մյուս Կողմին, իսկ մյուս Կողմն այդպիսի հանգամանքներում իրավունք ունի առարկելու ցանկացած Գաղտնի տեղեկատվության բացահայտման դեմ:

13.5. Կողմերը Գաղտնի տեղեկատվության գաղտնիությունը պահպանում են մինչեւ Կատարման ժամանակահատվածի ավարտից հետո առնվազն 6 (վեց) տարի:

13.6. Դրամաշնորհի շահառուն ապահովում է, որ Վերջնական շահառուն յուրաքանչյուր Պայմանագրում ներառի դրույթներ, որոնք Կապալառուից

պահանջում են համապատասխանել սույն 13-րդ հոդվածում (*Գաղտնիությունը)* շարադրված ցանկացած պարտավորության:

## ՀՈԴՎԱԾ 14.

## Մոնիթորինգը եւ գնահատումը

14.1. Եթե Բանկը կամ Եվրոպական հանձնաժողովը Դրամաշնորհի կամ Աշխատանքների գնահատման կամ մոնիթորինգի առաքելություն է իրականացնում, ապա Դրամաշնորհի շահառուն ապահովում է, որ Վերջնական շահառուն Բանկի կամ Եվրոպական հանձնաժողովի ներկայացուցիչներին կամ նրանց կողմից լիազորված անձանց տրամադրի ցանկացած փաստաթուղթ կամ տեղեկատվություն, որը կօժանդակի նրանց առաքելությանը, ինչպես նաեւ նրանց շնորհում են 15-րդ հոդվածում նշված (*Ստուգումները, հսկողությունն ու աուդիտները*) հասանելիության իրավունքները՝ հաշվի առնելով 13-րդ հոդվածը (*Գաղտնիությունը*):

14.2. Եթե Կողմերից որեւէ մեկն իրականացնում կամ հանձնարարում է Դրամաշնորհի օգտագործման կամ Աշխատանքների կատարման գնահատում, ապա այն պետք է մյուս Կողմին տրամադրի գնահատման վերաբերյալ համապատասխան հաշվետվության պատճենը: Բանկն այդ գնահատման վերաբերյալ հաշվետվության պատճենը տրամադրելու իրավունք է վերապահում Եվրոպական հանձնաժողովին, որը ներկայացնում է Եվրոպական միությունը որպես դոնոր:

## ՀՈԴՎԱԾ 15.

## Ստուգումները, հսկողությունն ու աուդիտները

15.1. Դրամաշնորհի շահառուն ԵՄ համապատասխան մարմնին եւ վերջինիս կողմից լիազորված ցանկացած արտաքին աուդիտորի թույլ է տալիս եւ ապահովում

է, որ Վերջնական շահառուն թույլ տա՝ i) ստուգել Աշխատանքների իրականացումն ու Պայմանագրերի կատարումը բնօրինակ փաստաթղթերն ուսումնասիրելու (այդ թվում՝ դրանցից պատճեններ կատարելու իրավունքով) եւ տեղում իրականացվող ստուգումների միջոցով, որպեսզի պաշտպանվեն Եվրոպական միության ֆինանսական շահերը՝ նպատակ ունենալով պարզելու, թե արդյոք դրսեւորվել է Եվրոպական միության՝ Աշխատանքների հետ կապված ֆինանսական շահերի վրա ազդող որեւէ Արգելված վարքագիծ, ii) անհրաժեշտության դեպքում կատարել համալիր աուդիտ՝ հաշվարկները հիմնավորող օժանդակ փաստաթղթերի եւ հաշվապահական հաշվառման փաստաթղթերի ու Աշխատանքների ֆինանսավորմանն առնչվող ցանկացած այլ փաստաթղթի հիման վրա, iii) այցելել Ծրագրում ներառված տեղանքներ, կայանքների տեղակայման եւ աշխատանքների կատարման վայրեր, iv) զրուցել Դրամաշնորհի շահառուի եւ (կամ) Վերջնական շահառուի ներկայացուցիչների հետ եւ չխոչընդոտել կապը Ծրագրում ներգրավված կամ Ծրագրի ներգործությունը կրող որեւէ այլ անձի հետ, եւ v) ուսումնասիրել Ծրագրի իրականացման հետ կապված Դրամաշնորհի շահառուի կամ Վերջնական շահառուի հաշվապահական գրանցամատյանները եւ փաստաթղթերը եւ վերցնել հարակից փաստաթղթերի պատճենները՝ օրենքով թույլատրված չափով: Այդ ստուգումները, հսկողությունը կամ աուդիտները կարող են տեղի ունենալ Դադարեցման ամսաթվին հաջորդող առավելագույնը վեց (6) տարվա ընթացքում:

15.2. 15.1 հոդվածի (*Ստուգումները, հսկողությունն ու աուդիտները*) համաձայն՝ Դրամաշնորհի շահառուն ԵՄ համապատասխան մարմնին եւ վերջինիս կողմից լիազորված ցանկացած արտաքին աուդիտորի այդ նպատակով տրամադրում է անհրաժեշտ հասանելիություն եւ աջակցություն եւ ապահովում է Վերջնական շահառուի կողմից դրանց տրամադրումը կամ ապահովում է, որ նրանց տրամադրվի անհրաժեշտ հասանելիություն եւ աջակցություն: 15-րդ հոդվածին (*Ստուգումները, հսկողությունն ու աուդիտները*) համապատասխան տրամադրված հասանելիությունը պետք է հիմնված լինի երրորդ կողմերից գաղտնիության պահպանման վրա՝ չհակասելով հանրային կամ ԵՄ իրավունքից

բխող՝ այդ հաստատությունների կամ մարմինների եւ դրանց աշխատակազմերի, ներկայացուցիչների նկատմամբ կիրառվող պարտավորություններին:

15.3. Դրամաշնորհի շահառուն աջակցում է Բանկի եւ (կամ) ԵՄ մարմինների կողմից Արգելված վարքագծի կամ Պատժամիջոցների խախտման ենթադրյալ կամ կասկածելի դրսեւորման հետ կապված քննությունների իրականացմանը եւ Բանկին եւ (կամ) ԵՄ մարմիններին տրամադրում է կամ ապահովում է, որ Բանկին եւ (կամ) ԵՄ մարմիններին տրամադրվի սույն 15-րդ հոդվածում (*Ստուգումները, հսկողությունն ու աուդիտները*) նկարագրված նպատակներով անհրաժեշտ օգնությունը:

15.4. Դրամաշնորհի շահառուն ապահովում է, որ Վերջնական շահառուն ապահովի, այդ թվում՝ այս առումով յուրաքանչյուր Պայմանագրում ժամկետներ նախատեսելով, որ 15-րդ հոդվածին (*Ստուգումները, հսկողությունն ու աուդիտները*) համապատասխան շնորհված իրավունքները հավասարապես կիրառելի լինեն յուրաքանչյուր Կապալառուի նկատմամբ:

15.5. Դրամաշնորհի շահառուն գիտակցում է եւ ապահովում է, որ Վերջնական շահառուն գիտակցի, որ Բանկը կարող է պարտավորվել Հանրապետության, Դրամաշնորհի շահառուի, Վերջնական շահառուի սույն Համաձայնագրի եւ Պայմանագրերի վերաբերյալ այդպիսի տեղեկատվություն հրապարակել Եվրոպական միության որեւէ իրավասու հաստատության կամ մարմնի համար՝ ԵՄ իրավունքի համապատասխան պարտադիր դրույթների համաձայն:

## ՀՈԴՎԱԾ 16.

### Անձնական տվյալների պաշտպանությունը

16.1. Անձնական տվյալների մշակումը Բանկի կողմից իրականացվում է Եվրոպական միության հաստատությունների եւ մարմինների կողմից Անձնական տվյալների մշակման մասով անհատների պաշտպանության եւ այդ տվյալների

ազատ փոխանցման վերաբերյալ՝ ՖՎՇՀ-ին եւ Եվրոպական միության կիրառելի օրենսդրությանը համապատասխան:

16.2. Սույն Համաձայնագրի վերաբերյալ տեղեկությունները (բացի Դրամաշնորհի շահառուի ՝ սույն Համաձայնագրի իրականացման մեջ ընդգրկված անձնակազմին վերաբերող կոնտակտային տեղեկություններից (**Կոնտակտային տվյալներ**)) Բանկին բացահայտելիս Դրամաշնորհի շահառուն զտում կամ որեւէ այլ կերպ փոփոխում է այդ տեղեկությունները (ըստ անհրաժեշտության), որպեսզի դրանք չպարունակեն նույնականացված կամ նույնականացման ենթակա անհատների հետ կապված որեւէ տեղեկություն (**Անձնական տեղեկություններ**)՝ բացառությամբ այն դեպքերի, երբ անձնական տեղեկությունների տեսքով այդ տեղեկությունների բացահայտումը պահանջվում է սույն Համաձայնագրով, կամ որոնք գրավոր ձեւով պահանջում է Բանկը:

16.3. Նախքան սույն Համաձայնագրի վերաբերյալ որեւէ անձնական տեղեկություն (Կոնտակտային տվյալներից բացի) Բանկին բացահայտելը Դրամաշնորհի շահառուն ապահովում է, որ յուրաքանչյուր անհատ, որին վերաբերում են այդ Անձնական տեղեկությունները՝

ա) տեղեկացված լինի Բանկին այդ բացահայտելու մասին (ներառյալ՝ բացահայտվելիք անձնական տեղեկությունների կատեգորիաները). եւ

բ) տեղեկացված լինի (կամ նրան տրամադրված լինի համապատասխան հղում) Բանկի կողմից վարկավորման եւ ներդրումների գործունեության վերաբերյալ նրա գաղտնիության դրույթներում ներառված տեղեկությունների մասին, որոնք ժամանակ առ ժամանակ հասանելի են https://www.eib.org/en/privacy/lending հղմամբ (կամ այլ այնպիսի հասցեով, որի մասին Բանկը կարող է ժամանակ առ ժամանակ ծանուցել Դրամաշնորհի շահառուին):

## ՀՈԴՎԱԾ 17.

### Բարեվարքության հանձնառությունը

17.1. Արգելված վարքագիծ

ա) Դրամաշնորհի շահառուն չի դրսեւորում եւ ապահովում է, որ Վերջնական շահառուն չդրսեւորի (եւ իր անունից գործող որեւէ անձի չի թույլատրում կամ թույլտվություն չի տալիս) որեւէ Արգելված վարքագիծ՝ կապված Նախագծի, Նախագծի համար իրականացվող մրցութային որեւէ ընթացակարգի կամ սույն Համաձայնագրով ենթադրվող որեւէ գործարքի հետ:

բ) Դրամաշնորհի շահառուն Ծրագրի առնչությամբ Արգելված վարքագծի ենթադրյալ կամ կասկածելի որեւէ դրսեւորում քննելու կամ այն դադարեցնելու վերաբերյալ Բանկի կողմից հիմնավոր պահանջ ներկայացվելու դեպքում պարտավորվում է եւ ապահովում է, որ Վերջնական շահառուն պարտավորվի ձեռնարկել այդպիսի գործողություններ:

գ) Դրամաշնորհի շահառուն պարտավորվում է եւ ապահովում է, որ Վերջնական շահառուն պարտավորվի ապահովել, որ սույն Դրամաշնորհով ֆինանսավորվող Պայմանագրերը ներառեն անհրաժեշտ դրույթներ՝ Դրամաշնորհի շահառուին կամ Վերջնական շահառուին Ծրագրի առնչությամբ Արգելված վարքագծի ենթադրյալ կամ կասկածելի որեւէ դրսեւորում քննելու կամ այն դադարեցնելու հնարավորություն տալու համար:

17.2. Պատժամիջոցներ

Դրամաշնորհի շահառուն ուղղակիորեն կամ անուղղակիորեն Ծրագրի առնչությամբ գործարար հարաբերություններ չի հաստատում (եւ չի թույլատրում կամ լիազորում որեւէ այլ անձի) եւ ապահովում է, որ Վերջնական շահառուն՝

ա) գործարար հարաբերություններ չհաստատի եւ (կամ) որեւէ ֆինանսական միջոց եւ (կամ) տնտեսական ռեսուրս հասանելի չդարձնի Ծրագրի մասով Պատժամիջոցի ենթարկված որեւէ անձի համար կամ նրա օգտին,

բ) Դրամաշնորհից ստացված շահույթն ամբողջությամբ կամ մասամբ չօգտագործի կամ այդ շահույթը պարտքով չտա, չներդնի կամ այլ կերպ հասանելի

չդարձնի որեւէ անձի որեւէ եղանակով, որը կհանգեցնի իր եւ (կամ) Բանկի կողմից որեւէ Պատժամիջոցի խախտման, կամ

գ) սույն Համաձայնագրով նախատեսված որեւէ վճար ամբողջությամբ կամ մասամբ չֆինանսավորվի Պատժամիջոցների ենթարկված անձի հետ իրականացվող գործունեությունից կամ գործարքներից ստացված շահույթից կամ որեւէ եղանակով, որը կհանգեցնի իր եւ (կամ) Բանկի կողմից որեւէ Պատժամիջոցի խախտման:

Ընդունվում եւ համաձայնեցվում է, որ սույն 17.2 հոդվածում նշված պարտավորությունները Բանկի կողմից հայցվում եւ դրան են տրվում այնքանով, որքանով դա անելը թույլատրելի կլիներ ԵՄ-ի հակաբոյկոտային որեւէ կիրառելի կանոնի, ինչպես օրինակ՝ 2271/96 կանոնակարգի (ԵՀ) համաձայն:

17.3. Համապատասխան անձինք

Դրամաշնորհի շահառուն հանձն է առնում եւ ապահովում է, որ Վերջնական շահառուն հանձն առնի ողջամիտ ժամկետում պատշաճ միջոցներ ձեռնարկել որեւէ Համապատասխան անձի նկատմամբ, որի նկատմամբ իրենց աշխատանքային պարտավորությունների իրականացման ժամանակ Արգելված վարքագիծ դրսեւորելու մասով դատարանի կողմից վերջնական կամ անփոփոխ վճիռ է կայացվել, որպեսզի ապահովվի այդպիսի Համապատասխան անձի ներգրավվածության բացառումը Դրամաշնորհի շահառուի կամ Վերջնական շահառուի՝ Դրամաշնորհին, սույն Համաձայնագրին եւ Ծրագրին առնչվող գործունեությանը:

17.4. Հավաստիացումները եւ երաշխիքները

Դրամաշնորհի շահառուն հավաստիացնում եւ երաշխավորում է Բանկին, որ Ուժի մեջ մտնելու ամսաթվին՝

ա) Դրամաշնորհի շահառուն եւ Վերջնական շահառուն Պատժամիջոցների ենթարկված անձինք չեն կամ չեն գործում Պատժամիջոցների խախտմամբ:

Ընդունվում եւ համաձայնեցվում է, որ սույն «ա» պարբերությունում նշված հավաստիացումները Բանկի կողմից հայցվում եւ դրան են տրվում այնքանով, որքանով դա անելը թույլատրելի կլիներ ԵՄ-ի հակաբոյկոտային որեւէ կիրառելի կանոնի, ինչպես օրինակ՝ 2271/96 կանոնակարգի (ԵՀ) համաձայն,

բ) Դրամաշնորհի շահառուի եւ (կամ) Վերջնական շահառուի կողմից նախագծում ներդրված որեւէ ֆինանսական միջոց ապօրինի ծագում չունի, ինչպես նաեւ ձեռք չի բերվել Փողերի լվացման հետեւանքով կամ կապ չունի Ահաբեկչության ֆինանսավորման հետ,

գ) Դրամաշնորհի շահառուն, Վերջնական շահառուն, նրա պաշտոնյաները կամ պետական պաշտոն զբաղեցնող ցանկացած անձ կամ նրա անունից կամ նրա հսկողության տակ գործող ցանկացած անձ՝ i) չեն դրսեւորել կամ չեն դրսեւորի որեւէ Արգելված վարքագիծ՝ կապված Ծրագրի կամ Համաձայնագրով ենթադրվող որեւէ գործարքի հետ, կամ ii) չեն իրականացրել կամ չեն իրականացնի որեւէ ապօրինի կամ անօրինական գործունեություն՝ կապված Ահաբեկչության ֆինանսավորման կամ Փողերի լվացման հետ, եւ

դ) Ծրագիրը (այդ թվում, առանց սահմանափակման, Դրամաշնորհի ֆինանսավորվող կամ ֆինանսավորման ենթակա պայմանագրերի վերաբերյալ բանակցությունը, շնորհումը եւ կատարումը) չի ներառել կամ չի առաջացրել որեւէ Արգելված վարքագիծ:

Հավաստիացումները եւ երաշխիքները համարվում են կրկնված Հատկացման հայտը Բանկ ներկայացնելու յուրաքանչյուր ամսաթվի, Հատկացման ամսաթվին եւ Գործողության դադարեցման ամսաթվին:

17.5. Սույն 17-րդ հոդվածի (*Բարեվարքության հանձնառությունը*) նպատակներով ցանկացած նախարարի, պետքարտուղարի, նախարարի օգնականի, ներկայացուցչի, պաշտոնատար անձի կամ խորհրդականի կամ պետական պաշտոն զբաղեցնող կամ գործառույթ իրականացնող ցանկացած այլ անձի կամ պետական մարմինների, ձեռնարկությունների, տնօրենի կամ

աշխատակցի կողմից աշխատանքի ընդունված կամ Դրամաշնորհի շահառուի եւ (կամ) Վերջնական շահառուի տնօրենի կամ պաշտոնատար անձի կամ Ծրագրի կառավարման խմբի անձնակազմի որեւէ անդամի ունեցած տեղեկությունները համարվում են Դրամաշնորհի շահառուի տեղեկությունները: Դրամաշնորհի շահառուն այդպիսի գործողության կատարում ենթադրող որեւէ փաստ կամ տեղեկատվություն իրենց հայտնի դառնալու դեպքում պարտավորվում է Բանկին տեղեկացնել դրա մասին եւ աջակցել ԵՄ համապատասխան մարմնի կամ վերջինիս կողմից լիազորված որեւէ անձի կողմից այդ գործողության կամ վարքագծի վերաբերյալ իրականացվող քննությանը:

Դրամաշնորհի շահառուի կողմից որեւէ պարտականություն չկատարելը կամ սույն 17-րդ հոդվածով (*Բարեվարքության հանձնառությունը*) սահմանված որեւէ հավաստիացման եւ երաշխիքի խախտումը Բանկին իրավունք է տալիս հետգանձում պահանջելու 20-րդ հոդվածի համաձայն (*Հետգանձումը*) եւ դադարեցնել սույն Համաձայնագիրը 23-րդ հոդվածի համաձայն (*Դադարեցումը*):

## ՀՈԴՎԱԾ 18.

### Անհաղթահարելի ուժի ազդեցությունը

18.1. Անհաղթահարելի ուժի ազդեցության ենթարկված Կողմը պետք է մյուս Կողմին անհապաղ տեղեկացնի այդ մասին՝ նշելով խնդրի բնույթը, հնարավոր տեւողությունը եւ կանխատեսելի հետեւանքները, ինչպես նաեւ վնասի նվազեցման նպատակով ձեռնարկված կամ ձեռնարկվելիք միջոցները:

18.2. Եթե Կողմն իր պարտավորությունները չի կարող կատարել Անհաղթահարելի ուժի ազդեցության հետեւանքով, ապա դա սույն Համաձայնագրով սահմանված պարտավորությունների խախտում չի համարվում:

## ՀՈԴՎԱԾ 19.

### Կասեցումը

19.1. Դրամաշնորհի շահառուն կարող է Բանկին տեղեկացնել, որ Վերջնական շահառուն կասեցնում է բոլոր Պայմանագրերի կամ դրանց մի մասի կատարումը, իսկ Բանկը կարող է Դրամաշնորհի շահառուից պահանջել, որպեսզի վերջինս ապահովի, որ Վերջնական շահառուն կասեցնի, եթե հանգամանքների (այդ թվում՝ Անհաղթահարելի ուժի ազդեցության) բերումով այն շարունակելը բավականին դժվարանում կամ վտանգավոր է դառնում: Եթե կատարումը կասեցնելու վերաբերյալ որոշումը կայացվում է Վերջնական շահառուի կողմից, ապա Դրամաշնորհի շահառուն Բանկին անհապաղ տեղեկացնում է կամ ապահովում է, որ Վերջնական շահառուն տեղեկացնի դրա մասին, ինչպես նաեւ տրամադրում է բոլոր անհրաժեշտ մանրամասները: Կատարումը կասեցնելու մասին որոշում կայացվելու դեպքում Բանկը կամ Դրամաշնորհի շահառուն կարող է դադարեցնել սույն Համաձայնագրի գործողությունը՝ 23-րդ հոդվածի (*Դադարեցումը*) դրույթներին համապատասխան: Սույն Համաձայնագրի գործողությունը չդադարեցվելու դեպքում Դրամաշնորհի շահառուն ձեռնարկում է եւ ապահովում է, որ Վերջնական շահառուն ձեռնարկի բոլոր անհրաժեշտ միջոցները՝ կասեցման ժամանակահատվածը նվազագույնի հասցնելու նպատակով, եւ կատարումը վերսկսում է այն ժամանակ, երբ հանգամանքները դա թույլ են տալիս, ինչպես նաեւ դրա մասին համապատասխանաբար տեղեկացնում են Բանկին:

19.2. Բանկը կարող է սույն Համաձայնագրի կատարումը կասեցնել նաեւ հետեւյալ դեպքերում՝ i) Անհաղթահարելի ուժի պատճառով. ii) երբ դա անհրաժեշտ է ստուգելու համար, թե արդյոք Աշխատանքների, Պայմանագրերի կամ Ծրագրի կատարումն իրականացվել է զգալի խախտումներով, սխալներով, օրինախախտումներով կամ խարդախությամբ. iii) Եվրոպական միությունն ընդունել է մարդու իրավունքների խախտումը հայտնաբերող որոշում, որով Բանկին արգելվում է կատարել սույն Համաձայնագրով սահմանված իր պարտականությունները. եւ (կամ) iv) Եվրոպական հանձնաժողովը կասեցրել է Օժանդակության համաձայնագրի կատարումը: Դրամաշնորհի շահառուն «ii» կետում նշված ստուգման առնչությամբ Բանկի կողմից պահանջված ցանկացած

տեղեկություն, պարզաբանում կամ փաստաթուղթ տրամադրում է եւ ապահովում է, որ Վերջնական շահառուն տեղեկություն, պարզաբանում կամ փաստաթուղթ տրամադրի այդպիսի պահանջ ստանալուց հետո երեսուն (30) օրացուցային օրվա ընթացքում: Այն դեպքում, երբ այդպիսի ստուգումները ցույց են տալիս, որ Աշխատանքների կամ Պայմանագրերի կատարումն իրականացվել է զգալի սխալներով, օրինախախտումներով կամ խարդախությամբ կամ Դրամաշնորհի շահառուի կամ որեւէ Կապալառուի կողմից պարտավորությունների խախտմամբ, ապա Բանկը Համաձայնագրի գործողությունը 23-րդ հոդվածին (*Դադարեցումը*) համապատասխան դադարեցնելու եւ արդեն իսկ հատկացված գումարները այն չափով գանձելու իրավունք է վերապահում իրեն, որքանով այդպիսի հատկացումը կատարվել է զգալի սխալներով, օրինախախտումներով, խարդախությամբ կամ պարտավորությունների խախտմամբ: 25-րդ հոդվածը (*Պատասխանատվությունը եւ պաշտպանությունը*) կիրառվում է համապատասխանաբար:

## ՀՈԴՎԱԾ 20.

### Հետզանձումը

20.1. Բանկի կողմից Դրամաշնորհը չհիմնավորված չափով հատկացվելու կամ հետգանձումը սույն Համաձայնագրին համապատասխան այլ հիմքով արդարացված լինելու դեպքում, այդ թվում՝ 7.11 հոդվածի (*Դրամաշնորհի վճարումը*) կամ 15-րդ հոդվածի (*Ստուգումները, հսկողությունն ու աուդիտները*) համաձայն իրականացված ստուգումների, հսկողության կամ աուդիտների արդյունքում Դրամաշնորհի շահառուն Բանկին հետ է վճարում այդ գումարները՝ այդպիսի հետվճարում պահանջող դեբետային ավիզոն Բանկից ստանալուց հետո երեսուն (30) օրացուցային օրվա ընթացքում: Բանկի պահանջած այդ գումարները Դրամաշնորհի շահառուն Բանկի կողմից ներկայացված գրավոր պահանջում նշված հաշվեհամարին է վճարում եվրոյով՝ անկախ Դրամաշնորհի շահառուին Բանկի կողմից Դրամաշնորհից նախնական վճարում կատարելու ժամանակ կիրառված Տարադրամի փոխարժեքից: Որեւէ կասկածի տեղիք չտալու

նպատակով Բանկի կողմից անհարկի հատկացված կամ Դրամաշնորհի շահառուի կողմից չօգտագործված կամ ոչ նպատակային օգտագործված եւ Բանկին հետ փոխանցված ցանկացած գումար պետք է արտահայտվի եվրոյով եւ հավասար լինի Բանկի կողմից Դրամաշնորհի շահառուին սկզբնապես վճարված՝ եվրոյով արտահայտված համապատասխան գումարին:

Որեւէ կասկածի տեղիք չտալու նպատակով Բանկը մասնավորապես կարող է կատարել իր կողմից 7-րդ հոդվածի (*Դրամաշնորհի վճարումը*) համաձայն հատկացված ցանկացած գումարի հետգանձումը, որը գերազանցել է Վերջնական շահառուի կողմից կրած՝ 8-րդ հոդվածին (*Թույլատրելի ծախսերը*) համապատասխան սահմանված թույլատրելի ծախսերի վերջնական գումարը:

20.2. Դրամաշնորհի շահառուի կողմից մարման ենթակա ընդհանուր գումարի վերաբերյալ Բանկի կողմից ներկայացված գրավոր պահանջը, բացառությամբ ակնհայտ սխալի առկայության դեպքի, համարվում է համոզիչ ապացույց՝ վճարման ենթակա գումարի, Բանկի կողմից կատարվող ցանկացած գանձման, Բանկին վճարման ենթակա գումարների հետ վճարման նպատակով Դրամաշնորհի շահառուի կամ Վերջնական շահառուի կողմից արտարժույթի փոխանակման համար կրած ծախսերի կամ կորստի կամ Դրամաշնորհի շահառուի կողմից, ըստ կիրառելիության, ցանկացած դեպքում վճարվող այլ հարկերի վերաբերյալ:

20.3. Չսահմանափակելով Կողմերի՝ մաս-մաս մարումներ կատարելուն համաձայնություն տալու իրավունքները՝ այն դեպքում, երբ Դրամաշնորհի շահառուն գումարը ժամանակին հետ չի վճարվում, վճարման ենթակա գումարի վրա հաշվեգրվում է տոկոս՝ Եվրոպական կենտրոնական բանկի կողմից իր հիմնական վերաֆինանսավորման գործառնությունների նկատմամբ կիրառվող՝ Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրի «C» շարքում վճարման վերջնաժամկետ համարվող ամսվա առաջին օրը հրապարակված տոկոսադրույքով՝ ավելացնելով երեք ու կես տոկոսային կետ: Տոկոսագումարը ենթակա է վճարման հետվճարման ժամկետը լրանալուն հաջորդող օրվանից

(ներառյալ) մինչեւ վճարման օրն ընկած ժամանակահատվածի համար: Ցանկացած մասնակի վճարմամբ պետք է առաջինը մարվի տոկոսը:

## ՀՈԴՎԱԾ 21.

### Փոփոխությունները

21.1. Սույն Համաձայնագրի, այդ թվում՝ դրա հավելվածների ցանկացած փոփոխություն պետք է գրավոր սահմանվի Կողմերի ստորագրած փաստաթղթում եւ ուժի մեջ մտնի համապատասխան փոփոխության վերաբերյալ համաձայնագրում նշված ժամկետում: 21-րդ հոդվածի (*Փոփոխությունները*) համաձայն կատարված փոփոխությունների վերաբերյալ դրույթները գերակայում են, եւ դրանց նախապատվություն է տրվում սույն Համաձայնագրի միայն այն որոշակի դրույթների նկատմամբ, որոնք հստակ փոփոխվել են այդ դրույթներով:

21.2. Չի թույլատրվում որեւէ փոփոխություն կատարել, եթե դրա նպատակը կամ հետեւանքը սույն Համաձայնագրում այնպիսի փոփոխություն կատարելն է, որով կասկածի տակ կդրվի Դրամաշնորհի տրամադրելու հարցը:

21.3. Հասցեի կամ կոնտակտային տվյալների փոփոխության վերաբերյալ կարելի է պարզապես գրավոր ծանուցել մյուս Կողմերին՝ 26-րդ հոդվածին (*Ծանուցումները եւ այլ հաղորդումներ*) համապատասխան:

21.4. Սույն Համաձայնագրի փոփոխությունը վավերացման կամ հաստատման կարիք չունի Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմինների կողմից՝ բացառությամբ այն դեպքերի, երբ i) այն չի մեծացնի Դրամաշնորհի շահառուի պարտավորությունները սույն Համաձայնագրով, կամ ii) երբ վավերացում կամ հաստատում (ըստ կիրառելիության) պահանջվում է Հայաստանի Հանրապետության օրենքներին համապատասխան:

## ՀՈԴՎԱԾ 22.

### Իրավունքների փոխանցումը

22.1. Որեւէ Կողմ չի կարող երրորդ կողմի իրավունք շնորհել կամ փոխանցել

կամ այլ կերպ իրացնել սույն Համաձայնագրով նախատեսված իր իրավունքներն ու պարտավորությունները՝ առանց մյուս Կողմերի նախապես տված գրավոր համաձայնության:

22.2. Որպես վերոնշյալից բացառություն՝ Բանկը կարող է սեփական հայեցողությամբ Եվրոպական հանձնաժողովին փոխանցել անհիմն հատկացված Դրամաշնորհի գումարները հետ գանձելու իրավունքը:

**ՀՈԴՎԱԾ 23.**

**Դադարեցումը**

23.1. Եթե Կողմը համարում է, որ Համաձայնագրի արդյունավետ եւ պատշաճ կատարումն այլեւս հնարավոր չէ, ապա վերջինս այդ հարցի շուրջ խորհրդակցում է մյուս Կողմերի հետ: Որեւէ լուծման շուրջ համաձայնության չգալու դեպքում Կողմը կարող է դադարեցնել Համաձայնագրի գործողությունը՝ բոլոր Կողմերին վաթսուն (60) օրացուցային օր առաջ գրավոր ծանուցում հանձնելով եւ չսահմանափակելով սույն Համաձայնագրի որեւէ Կողմի այլ իրավունքներ ու լիազորություններ:

23.2. Եթե որեւէ պատճառով Օժանդակության համաձայնագիրը կամ Ֆինանսավորման պայմանագիրը դադարում է կամ անվավեր է դառնում, կորցնում է ուժը, կամ դադարեցվում է դրա գործողությունը, ապա Բանկն իրեն իրավունք է վերապահում Դրամաշնորհի շահառուին երեսուն (30) օրացուցային օր առաջ գրավոր ծանուցում հանձնելուց հետո, առանց Բանկի համար որեւէ պատասխանատվություն առաջանալու, դադարեցնելու սույն Համաձայնագիրը եւ Դրամաշնորհի շահառուին տեղեկացնելու այդ դադարեցման ժամկետների մասին:

23.3. Դադարեցման՝ սույն Համաձայնագրով նախատեսված որեւէ այլ պատճառից բացի՝ Բանկը կարող է Դրամաշնորհի շահառուին յոթ (7) օրացուցային օր առաջ գրավոր ծանուցում հանձնելուց հետո, առանց Բանկի համար որեւէ պատասխանատվություն առաջանալու, դադարեցնել սույն Համաձայնագիրը, եթե ստեղծվել է հետեւյալ իրավիճակներից որեւէ մեկը.

ա) Դրամաշնորհի շահառուն, առանց Բանկի համար ընդունելի

հիմնավորման, չի կատարում իր վրա դրված պարտավորություններից որեւէ մեկը եւ այդ պարտավորությունները կատարելու վերաբերյալ գրավոր ծանուցում ստանալուց հետո կրկին չի կատարում դրանք կամ այդպիսի ծանուցում ստանալուց հետո՝ երեսուն (30) օրացուցային օրվա ընթացքում, համապատասխան բացատրություններ չի տրամադրում.

բ) Դրամաշնորհի շահառուն կամ Վերջնական շահառուն, Դրամաշնորհի շահառուին կամ Վերջնական շահառուին ներկայացնելու, նրա առնչությամբ որոշումներ կայացնելու կամ հսկողություն իրականացնելու լիազորություն ունեցող ցանկացած անձ կատարում է մասնագիտական վարվելակերպի կանոնների լուրջ խախտում կամ մեղավոր են ճանաչվում դա կատարելու համար կամ մասնագիտական վարվելակերպին առնչվող որեւէ իրավախախտման մասով հարուցված վարույթում են ներգրավված կամ կատարել են խարդախություն, ներգրավված են եղել կոռուպցիայի կամ հանցավոր համագործակցության, Փողերի լվացման, Ահաբեկչության ֆինանսավորման կամ Եվրոպական միության ֆինանսական շահերին վնասող որեւէ այլ անօրինական գործողության մեջ, կամ նրանց մասով առկա են հանցավոր համագործակցության, խարդախության, Արգելված վարքագծի, Փողերի լվացման կամ Ահաբեկչության ֆինանսավորման վերաբերյալ պնդումներ (բացառությամբ այն պնդումների, որոնք Բանկի հիմնավոր կարծիքի համաձայն անհիմն են կամ անբարեխիղճ).

գ) Դրամաշնորհի շահառուն կամ Վերջնական շահառուն կեղծ հաշվետվություններ են ներկայացնում կամ նյութական բնույթի կեղծ կամ թերի հայտարարություններ են կատարում.

դ) Դրամաշնորհի շահառուն կամ Վերջնական շահառուն ենթարկվում են իրավական, ֆինանսական, տեխնիկական կամ կազմակերպական փոփոխությունների, որոնք կարող են սույն Համաձայնագրի վրա զգալի ազդեցություն գործել կամ կասկածի տակ դնել Եվրոպական միության՝ Դրամաշնորհի տրամադրելու որոշումը.

ե) Դրամաշնորհի շահառուն չի ապահովում, որ Վերջնական շահառուն

վարի 8.3 հոդվածում (*Թույլատրելի ծախսերը*) նշված Հաշվետվությունները.

զ) Վերջնական շահառուն չի կատարում Ֆինանսավորման համաձայնագրով նախատեսված իր պարտականությունները. եւ

է) դադարում է Օժանդակության համաձայնագիրը:

23.4. 23-րդ հոդվածին (*Դադարեցումը*) համապատասխան Համաձայնագրի գործողությունը դադարեցվելուց հետո Դրամաշնորհի շահառուն, առանց անհարկի ուշացումների, անհապաղ եւ կանոնակարգված ձեւով ձեռնարկում է եւ ապահովում է, որ Վերջնական շահառուն ձեռնարկի աշխատանքներն ավարտելուն եւ հետագա ծախսերը նվազագույնի հասցնելուն ուղղված բոլոր քայլերը:

23.5. Չհակասելով 20.1 հոդվածին (*Հետգանձումը*) եւ հաշվի առնելով 8-րդ հոդվածը (*Թույլատրելի ծախսերը*)՝ Դրամաշնորհի շահառուն իրավունք ունի ստանալու Դրամաշնորհի միայն այն մասը, որը համապատասխանում է մինչեւ դադարեցման ժամկետը կատարված Աշխատանքների համար սույն Համաձայնագրին համապատասխան կրած ծախսերին՝ այսպիսով բացառելով ստանձնած այնպիսի պարտավորություններին առնչվող ծախսերը, որոնք պետք է կատարվեին դադարեցման այդ օրվանից հետո:

23.6. Չհակասելով 20.4 հոդվածին (*Հետգանձումը*) եւ հաշվի առնելով 23.4 հոդվածը (*Դադարեցումը*)՝ Համաձայնագրի գործողության դադարեցման դեպքում, որի պատճառներն ուղղակիորեն կամ անուղղակիորեն չեն վերագրվում Դրամաշնորհի շահառուին, Բանկը կարող է համաձայնել փոխհատուցելու Դրամաշնորհի շահառուի կողմից ծանուցման ժամկետում կրած անխուսափելի եւ ողջամիտ թույլատրելի ծախսերը:

## ՀՈԴՎԱԾ 24.

### Գանձումները եւ ծախսերը

24.1. Դրամաշնորհի շահառուն Հայաստանի Հանրապետության

օրենսդրությանը համապատասխան վճարում է սույն Համաձայնագրի կատարումից կամ իրականացումից առաջացող հարկերը, տուրքերը, վճարները եւ ցանկացած տեսակի այլ վճարումներ, այդ թվում՝ դրոշմատուրքը եւ գրանցման վճարները:

24.2. Դրամաշնորհի շահառուն ինքն է կրում բոլոր ծախքերը եւ ծախսերը, այդ թվում՝ մասնագիտական, բանկային կամ արտարժույթի փոխանակման հետ կապված ծախսերը, որոնք կարող են առաջանալ՝ կապված սույն Համաձայնագրի կամ ցանկացած հարակից փաստաթղթի նախապատրաստման, կատարման, իրականացման եւ գործողության դադարեցման, այդ թվում՝ դրանցում կատարվող ցանկացած փոփոխության հետ:

## ՀՈԴՎԱԾ 25.

### Պատասխանատվությունը եւ պաշտպանությունը

25.1. Բանկը կամ Եվրոպական միությունը ոչ մի պարագայում կամ որեւէ պատճառով պատասխանատվություն չի կրում Պայմանագրերի կատարման ընթացքում կամ որեւէ Պայմանագրի հետեւանքով Դրամաշնորհի շահառուի կամ Վերջնական շահառուի անձնակազմին կամ գույքին պատճառված վնասների համար այն դեպքում, երբ այդ վնասն առաջացել է Կապալառուի որեւէ գործողության կամ անգործության կամ էլ Կապալառուի կողմից համապատասխան Պայմանագրի համաձայն Աշխատանքները չկատարելու հետեւանքով:

25.2. Բանկը պատասխանատվություն չի կրում որեւէ կորստի կամ վնասի, այդ թվում՝ փաստաբանի ծառայությունների հետ կապված ողջամիտ վճարների եւ ծախսերի համար, որոնք կարող են առաջանալ սույն հոդվածի համաձայն իր գործողության կամ անգործության հետեւանքով՝ բացառությամբ այն կորստի կամ վնասի, որը կարող է առաջանալ իր կոպիտ անփութության կամ կանխամտածված արարքների հետեւանքով:

25.3. Դրամաշնորհի շահառուն ազատում է եւ ապահովում է, որ Վերջնական շահառուն ազատի Բանկին ցանկացած պատասխանատվությունից եւ բոլոր այն

պատասխանատվություններից, որոնք կարող են առաջանալ որեւէ բողոքի կամ հայցի հետեւանքով, որը ներկայացվել է Դրամաշնորհի շահառուի կամ Վերջնական շահառուի, դրանց կապալառուների, աշխատակիցների կամ այն անհատների՝ կիրառելի օրենքների, նորմերի կամ կանոնակարգերի խախտման արդյունքում, որոնց համար պատասխանատվություն են կրում Դրամաշնորհի Շահառուն կամ Վերջնական շահառուները, դրանց կապալառուները կամ աշխատակիցները, կամ էլ երրորդ կողմի իրավունքների, այդ թվում՝ Մտավոր սեփականության իրավունքների խախտման արդյունքում:

25.4. Չսահմանափակելով Բանկի՝ սույն Համաձայնագրով, Ֆինանսավորման պայմանագրով կամ ցանկացած կիրառելի օրենքով նախատեսված այլ իրավունքներ՝ Դրամաշնորհի շահառուն փոխհատուցում է Բանկին եւ ստանձնում ցանկացած եւ բոլոր այն բողոքներից, պահանջներից, վնասներից, կորուստներից, ծախքերից եւ ծախսերից (այդ թվում՝ փաստաբանի ծառայությունների հետ կապված ողջամիտ վճարներից եւ ծախսերից) բխող կամ դրանց նկատմամբ, ինչպես նաեւ Բանկի ցանկացած այնպիսի պարտավորությունների նկատմամբ երաշխավորություն, որոնք կարող են առաջանալ Դրամաշնորհի շահառուի կողմից կատարված գործողության կամ անգործության կամ Դրամաշնորհի շահառուի կողմից սույն Համաձայնագրով սահմանված պարտավորություններից որոշները չկատարելու հետեւանքով:

25.5. Դրամաշնորհի շահառուն ապահովում է, որ Վերջնական շահառուն ներառի յուրաքանչյուր Պայմանագրում դրույթներ, որոնք Կապալառուից պահանջում են ընդունել պատասխանատվության եւ պաշտպանության վերաբերյալ դրույթներն ու համաձայնել այդ դրույթների հետ, որոնք շարադրված են 25-րդ հոդվածում (*Պատասխանատվությունը եւ պաշտպանությունը*):

## ՀՈԴՎԱԾ 26.

### Ծանուցումները եւ այլ հաղորդումներ

26.1. Սույն Համաձայնագրի շրջանակներում կատարվելիք ցանկացած

ծանուցում կամ այլ հաղորդում պետք է իրականացվի գրավոր եւ պետք է պարունակի սույն Համաձայնագրի նույնականացման կոդը (FI թիվ 96161) եւ անվանումը (*Դրամաշնորհի համաձայնագիր. ԵՐԵՎԱՆԻ ԷՆԵՐԳԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ II ՓՈՒԼԻ ԾՐԱԳԻՐ*):

26.2. Սույն Համաձայնագրի շրջանակներում կամ դրա առնչությամբ ցանկացած ծանուցում պետք է կատարվի անգլերեն: Սույն Համաձայնագրով նախատեսված կամ դրա առնչությամբ տրամադրվող մյուս բոլոր փաստաթղթերը պետք է լինեն անգլերեն, իսկ եթե անգլերեն չեն, ապա դրանց պետք է կցված լինի դրանց անգլերեն պաշտոնական թարգմանությունը, եւ այդ դեպքում նախապատվությունը տրվում է անգլերեն թարգմանությանը՝ բացի այն դեպքերից, երբ տվյալ փաստաթուղթը սահմանադրական, օրենսդրական կամ այլ նմանատիպ պաշտոնական փաստաթուղթ է:

26.3. Բացառությամբ վարույթում գտնվող կամ հնարավոր դատավարության վերաբերյալ ծանուցումների, որոնք ստորեւ ներկայացված հասցեներին պետք է ուղարկվեն բացառապես փոստով՝ պաշտոնական նամակի միջոցով եւ ստացման հաստատմամբ, սույն Համաձայնագրի վերաբերյալ բոլոր ծանուցումները եւ նամակագրությունը պետք է իրականացվեն փոստով, ֆաքսով կամ ըստ Կողմերի համաձայնության՝ գրավոր, էլեկտրոնային փոստով կամ էլեկտրոնային հաղորդակցության այլ միջոցներով՝ հետեւյալ հասցեներին.

| | |
|---|---|
| Բանկի համար՝ | Եվրոպական ներդրումային բանկ |
| | **Ուղղված**՝ ԵՆԲ Գլոբալ, Սահմանակից երկրների վարչություն, |
| | Հանրային սեկտորի արեւելյան բաժին |
| | 98-100, Կոնրադ Ադենաուր բուլվար |
| | L-2950, Լյուքսեմբուրգ |
| | Էլ. փոստի հասցե՝ ops-nc2-projects@eib.org |

Դրամաշնորհի շահառուի համար՝ **Ուղղված**՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն

Մելիք Ադամյան փողոց 1

Երեւան 0010, Հայաստան

Էլ. փոստի հասցե՝ secretariat@minfin.am

26.4. Վերոնշյալ կոնտակտային տվյալների ցանկացած փոփոխություն ուժի մեջ է մտնում միայն մյուս Կողմին վերոնշյալ հասցեներով այդ մասին էլեկտրոնային փոստով կամ թղթային տարբերակով գրավոր ծանուցում ուղարկելուց հետո:

26.5. Ծանուցումները եւ այլ հաղորդումներ համարվում են կատարված՝ ստացող Կողմի կողմից դրանք ստանալուց հետո:

## ՀՈԴՎԱԾ 27.

## Կարգավորող իրավունքը եւ վեճերի լուծումը

27.1. Սույն Համաձայնագիրը եւ դրանից ծագող կամ դրա հետ կապված ցանկացած ոչ պայմանագրային պարտավորություն կարգավորվում է Լյուքսեմբուրգի օրենսդրությամբ:

27.2. Սույն Համաձայնագրի առկայության, գործողության, մեկնաբանման, իրականացման կամ դադարեցման առնչությամբ ծագող ցանկացած վեճ, անհամաձայնություն, հակասություն կամ բողոք (այսուհետ միասին՝ Վեճ) կարգավորվում է հնարավորինս խաղաղ ճանապարհով՝ խորհրդակցությունների եւ բանակցությունների միջոցով Բանկի եւ Դրամաշնորհի շահառուի միջեւ ձեռք բերվող համաձայնությամբ: Եթե Կողմերից որեւէ մեկի կողմից Վեճի մասին ծանուցումից հետո 60 (վաթսուն) օրվա ընթացքում Վեճը չի կարող Բանկի եւ Շահառուի կողմից խաղաղ ճանապարհով լուծվել, ապա այն լուծվում է վերջնական եւ պարտադիր ուժ ունեցող արբիտրաժային վարույթով՝ սույն Համաձայնագրի կնքման պահի դրությամբ գործող՝ Միավորված ազգերի կազմակերպության միջազգային առեւտրային իրավունքի հանձնաժողովի արբիտրաժային կանոններին (ՅՈՒՆՍԻՏՐԱԼ) համապատասխան, որոնք համարվում են

ինկորպորացված սույն հոդվածում՝ հղում կատարելու միջոցով:

27.3. Արբիտրները երեքն են: Արբիտրաժային ընթացակարգի լեզուն անգլերենն է: Արբիտրաժային վարույթները տեղի են ունենում Նիդեռլանդներում՝ Հաագայում:

27.4. Եթե այլ պայմանավորվածություն ձեռք չի բերվել, ապա բոլոր առարկություններն ու բոլոր լսումներն ավարտվում են արբիտրաժային տրիբունալի կազմավորումից հետո 6 (վեց) ամսվա ընթացքում: Տրիբունալն իր որոշումը կայացնում է վերջնական առարկությունները ներկայացնելուց հետո 60 (վաթսուն) օրվա ընթացքում:

27.5. Տրիբունալի կողմից կայացված ցանկացած վերջնական որոշում պարտադիր է այն կայացնելու օրվանից, եւ Կողմերը սույնով հրաժարվում են իրավունքի մասով եւ (կամ) ըստ էության քննության հետ կապված ցանկացած բողոք որեւէ դատարան ներկայացնելու իրենց իրավունքից: Անկախ ՅՈՒՆՍԻՏՐԱԼ-ի արբիտրաժային կանոններից՝ տրիբունալը չի ձեռնարկում կամ տրամադրում, եւ Դրամաշնորհի շահառուն որեւէ դատական մարմնից չի պահանջում որեւէ միջանկյալ միջոց կամ Բանկի դեմ հարուցված հայցի բավարարում:

27.6. Դրամաշնորհի շահառուն իր տարածքում անհապաղ ենթարկվում է այդպիսի որոշմանն ու կատարում այն:

27.7. Եթե Դրամաշնորհի շահառուին չի հաջողվում որոշումը կայացնելու օրվանից 3 (երեք) ամսվա ընթացքում կատարել նախորդ պարբերությունում նշված իր պարտավորությունը, ապա այնքանով, որքանով Դրամաշնորհի շահառուն կարող է որեւէ պետությունում պահանջել իր կամ իր ակտիվների անձեռնմխելիություն որեւէ հայցից, հարկադիր կատարումից, բռնագանձումից կամ այլ իրավական գործընթացից, Դրամաշնորհի շահառուն սույնով անդառնալիորեն համաձայնում է չպահանջել եւ սույնով անդառնալիորեն հրաժարվել այդպիսի անձեռնմխելիությունից՝ այդ պետության օրենքներով թույլատրված ամբողջ

ծավալով:

## ՀՈԴՎԱԾ 28.

**Իրավունքները պահպանելը**

28.1. Բանկի կողմից սույն Համաձայնագրով սահմանված իր իրավունքներից որեւէ մեկը չիրացնելը կամ ուշացմամբ իրացնելը չի համարվում այդ իրավունքից հրաժարում:

28.2. Սույն Համաձայնագրում ոչինչ չի համարվում Բանկին, նրա կառավարիչներին, տնօրեններին, տեղակալներին, պաշտոնատար անձանց, աշխատակիցներին կամ Բանկի համար առաջադրանքներ կատարող փորձագետներին վերապահված արտոնություններից, անձեռնմխելիությունից եւ բացառումներից ակնհայտ կամ ենթադրյալ հրաժարում:

## ՀՈԴՎԱԾ 29.

**Ամբողջական համաձայնագիրը**

Սույն Համաձայնագիրը Կողմերի միջեւ դրա կարգավորման առարկայի վերաբերյալ համաձայնության պայմանների ամբողջական եւ բացառիկ շարադրանքն է, որը փոխարինում է Կողմերի միջեւ նույն կարգավորման առարկայի վերաբերյալ բոլոր նախորդ համաձայնություններին:

## ՀՈԴՎԱԾ 30.

**Անվավերությունը**

Եթե ցանկացած պահի սույն Համաձայնագրի որեւէ դրույթ ապօրինի է կամ դառնում է ապօրինի, անվավեր կամ որեւէ առումով կատարման ոչ ենթակա որեւէ իրավազորության իրավունքի համաձայն, ապա ո՛չ մնացած դրույթների օրինականությունը, վավերությունը կամ կատարման ենթակա լինելը, ո՛չ էլ որեւէ այլ իրավազորության իրավունքի համաձայն այդպիսի դրույթի օրինականությունը,

վավերությունը կամ կատարման ենթակա լինելը չեն կարող որեւէ կերպ ենթարկվել որեւէ ազդեցության կամ խաթարվել:

## ՀՈԴՎԱԾ 31.

### Անգլերեն լեզուն

Սույն Համաձայնագիրը կազմվում է անգլերենով: Եթե սույն Համաձայնագիրը թարգմանվում է այլ լեզվով, ապա գերակայում է անգլերեն տեքստը:

## ՀՈԴՎԱԾ 32.

### Ուժի մեջ մտնելը

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում այն ամսաթվից (**Ուժի մեջ մտնելու ամսաթիվ**), երբ Բանկը գրավոր հաստատել է Դրամաշնորհի շահառուին, որ ստացել է սույն Համաձայնագրի 7.6 հոդվածի պարբերություն (ե)-ով պահանջվող ապացույցները Բանկի համար ընդունելի ձեւով եւ բովանդակությամբ:

Որեւէ կասկածի տեղիք չտալու նպատակով ո՛չ Դրամաշնորհի շահառուն, ո՛չ Բանկը միմյանց նկատմամբ չունեն սույն Համաձայնագրի համաձայն կամ դրա առնչությամբ որեւէ պահանջ կամ ընդհանուր առմամբ որեւէ պատասխանատվություն այնքան ժամանակ, քանի դեռ Բանկը չի տրամադրել նման գրություն (այդ թվում՝ էլեկտրոնային փոստով կամ այլ էլեկտրոնային միջոցներով):

Եթե Ուժի մեջ մտնելու ամսաթիվը տեղի չի ունենում սույն Համաձայնագիրը կնքելու օրվանից 12 (տասներկու) ամսվա ընթացքում, ապա սույն Համաձայնագիրն ուժի մեջ չի մտնում, եւ հետագա գործողությունների անհրաժեշտություն կամ պահանջ չի լինում:

Ի ՀԱՎԱՍՏՈՒՄՆ ՈՐԻ՝ սույն Համաձայնագրի Կողմերը ձեռնարկել են իրենց

անունից սույն Համաձայնագրի կնքումը երեք (3) բնօրինակից՝ անգլերեն, որից 2-ը (երկու)՝ Բանկի համար, 1-ը (մեկ)՝ Դրամաշնորհի շահառուի համար:

Երեւանում, սույն նոյեմբերի 12, 2024թ.

Լյուքսեմբուրգում, սույն նոյեմբերի 12, 2024թ.

Ստորագրվել է **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ** կողմից եւ անունից՝

______________________

______________________

**Վահե Հովհաննիսյան**

Ֆինանսների նախարար

Ստորագրվել է **ԵՎՐՈՊԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԲԱՆԿԻ** կողմից եւ անունից՝

| | |
|---|---|
| [Ռաֆալ ՌԱՅԲԱԿԻ [Rafal RYBACKI] | Հելեն ՈւԻԼԻԱՄՍ [Helen WILLIAMS] |
| Բաժանմունքի ղեկավար | Բաժանմունքի ղեկավար] |

## Հավելված 1.

## Ծրագրի նկարագրությունը

Ծրագրի ընդհանուր նպատակն է նվազեցնել շենքերում էներգիայի սպառումը եւ աջակցել էներգաարդյունավետությանը եւ վերականգնվող էներգիայի միջոցառումներին, որոնք ներառում են աշխատանքներ՝ ուղղված Երեւանում գտնվող ընտրված շենքերի (հիմնականում պոլիկլինիկաների եւ մանկապարտեզների) ընդհանուր տեխնիկական վիճակի բարելավմանը:

***Նպատակները***

Ծրագրով նախատեսվում է վերականգնել մոտավորապես 38 հասարակական շենք, 6 պոլիկլինիկա եւ 32 մանկապարտեզ (ընդհանուր համախառն տարածքը 109,278.30 մ$^2$), եւ ակնկալվում է շենքերի էներգիայի սպառումը կրճատել մոտ 65%-ով (Ծրագրի լիարժեք իրականացումից հետո տարեկան 19,65 ԳՎտժ/տարի) եւ նվազագույնը 20 տարով ավելացնել շենքերի շահագործման ժամկետը:

Ծրագրի հիմնական նպատակներն են՝

- բարելավել Հայաստանի բնակչության համար կարեւոր ծառայությունների մատուցման համար շահագործվող շենքերի էներգիայի ինտենսիվությունը,

- էներգիայի ծախսերի կրճատման միջոցով մշտապես նվազեցնել էներգիայի եւ պահպանման ծախսերը,

- ստեղծել էներգախնայողության փոխհատուցումներ, որոնք կարող են նման տեսակի ծրագրերի համար ընդունելի սահմաններում թույլ տալ, որ պոլիկլինիկաներն ու մանկապարտեզները միջոցներ հատկացնեն ծառայությունների, կրթական նյութերի, նորարարական տեխնոլոգիաների բարելավման համար,

- Երեւանում եւ Հայաստանի մնացած այլ հասարակական շենքերում

պոտենցիալ վերարտադրման նպատակով զարգացնել համապարփակ էներգաարդյունավետ վերանորոգման կարողություններ եւ հմտություններ,

- բարելավել սեյսմիկ անվտանգության վիճակը,
- ապահովել հասանելիություն հաշմանդամություն ունեցող անձանց համար,
- բարելավել հանրային ծառայությունների որակն ու հանրային շենքերի արտաքին տեսքը,
- բարելավել շենքեր այցելող մարդկանց հարմարավետությունն ու կյանքը (հազարավոր աշակերտներ, մանկապարտեզի ուսուցիչներ, անվտանգ եւ առողջ միջավայրում աշխատող բժշկական անձնակազմ, պացիենտներ),
- աջակցել էներգետիկ անվտանգության հարցերում կառավարության մտադրությանը՝ նվազեցնելով էներգակիրների ներմուծումը,
- աջակցել շինարարության ոլորտին, էներգաարդյունավետության ստանդարտների մշակմանը,
- նվազեցնել $CO_2$ եւ այլ ջերմոցային գազերի արտանետումները,
- երկարացնել վերանորոգված շենքերի շահագործման ժամկետը:

***Ծրագրի նկարագրությունը***

Ծրագրով աջակցություն կցուցաբերվի շենքերի հիմնանորոգմանը՝ վերանորոգումը խթանող էներգաարդյունավետության շնորհիվ: Մասնավորապես Ծրագիրը վերաբերում է Հայաստանում՝ Երեւանում, հասարակական շենքերի (մանկապարտեզներ եւ պոլիկլինիկաներ) ջերմային վերանորոգմանը՝ համալիր վերանորոգման միջոցառումների միջոցով, որոնք ներառում են շենքերը պատող կոնստրուկցիաների վերանորոգում, պատուհանների փոխարինում, նոր արդյունավետ կաթսաներ, արեւային տաք ջրամատակարարման համակարգեր,

լուսավորություն եւ այլն: Վերանորոգման աշխատանքներն ուղղված կլինեն նաեւ շենքերի ինտեգրված ֆոտոգալվանային էլեկտրաէներգիայի արտադրության, սեյսմիկ ամրացման եւ հաշմանդամություն ունեցող անձանց հասանելիությունն ապահովող ենթակառուցվածքների տեղադրմանը:

***Առաջին հերթին կիրականացվեն հետեւյալ աշխատանքները.***

Ակնկալվում է, որ Դրամաշնորհի միջոցով աջակցություն եւ համաֆինանսավորում կցուցաբերվի էներգաարդյունավետության հիմնահատակ վերանորոգմանը, այսինքն՝ ջերմային վերանորոգում, իսկ ավելի կոնկրետ՝ շենքերը պատող կոնստրուկցիաների վերանորոգում (ներառյալ՝ տանիքներն ու նկուղները, կոնստրուկցիոն աշխատանքները, դռների եւ պատուհանների փոխարինումը, արդիականացումը կամ օդափոխության նոր համակարգերը), էներգաարդյունավետության միջոցառումներ (ներառյալ՝ լուսավորության վերանորոգում/ լուսավորության նոր համակարգեր, ջերմության անջատման/բաշխման համակարգերի արդիականացում, արեւային ջրատաքացում, արեւային ֆոտոգալվանային էներգիայի արտադրություն, ջերմային պոմպեր), կոնստրուկցիոն աշխատանքներ (սեյսմակայունություն եւ հաշմանդամություն ունեցող անձանց համար հասանելիություն ապահովելու համար): Ավելի փոքր մասը կհատկացվի մանրամասն աուդիտի, նախագծման, վերահսկողության եւ հավաստագրման ծառայությունների հետ կապված ծախսերին:

# Հավելված 2.

## Ծրագրի գնահատված ծախսերը

| | Նկարագրությունը | Գումարը (մլն եվրո) |
|---|---|---|
| Ներդրման ծախսեր | Շենքերի ջերմային վերանորոգում եւ շենքերը պատող կոնստրուկցիաների վերանորոգում, ներառյալ՝ տանիքները եւ նկուղները, կոնստրուկցիոն աշխատանքները (սեյսմակայունություն եւ հաշմանդամություն ունեցող անձանց համար հասանելիություն ապահովելու համար), դռների եւ պատուհանների փոխարինում, արդիականացում կամ օդափոխության նոր համակարգեր.<br>Էներգաարդյունավետության միջոցառումներ (վերանորոգում/լուսավորության նոր համակարգեր)՝ կապված լուսավորության համակարգերի, ջերմաբաշխիչ համակարգերի եւ վերականգնվող էներգիայի աղբյուրների հետ (արեւային ջրատաքացում, արեւային ֆոտոգալվանային էներգիայի արտադրություն, ջերմային պոմպեր) | 37.10 |
| Տեխնիկական աջակցություն | ՏԱ ծրագրի իրականացմանն օժանդակելու համար (ֆինանսավորվում է ՀՆՀ ՏԱ դրամաշնորհից, գնորդը Բանկն է) | 0.65 |
| Հաղորդակցություն | Հաղորդակցման եւ տեսանելիության միջոցառումներ | 0.25 |
| **Ամբողջը** | | **38.00** |

## *Ֆինանսավորման աղբյուրներ*

| Ֆինանսավորումը | Ֆինանսավորման/օժանդակության տեսակը | Ֆինանսավորվող հիմնական բաղադրիչները | Գումարը (մլն եվրո) |
|---|---|---|---|
| - Ներդրումային դրամաշնորհ | ՀՆՀ ՆԴ | Շենքերի ջերմային վերանորոգման եւ վերականգնման համաֆինանսավորում | 10.1 |
| - Տեխնիկական աջակցություն ներդրումների փուլ | ՀՆՀ ՏԱ | ՏԱ ծրագրի իրականացմանն օժանդակելու համար | 0.65 |
| - Այլ | ՀՆՀ | Հաղորդակցություն եւ տեսանելիություն | 0.25 |
| Շրջանակային վարկ | ԵՆԲ վարկ | Ծրագրի ֆինանսավորում | 25.00 |
| Ֆինանսական հարցերով այլ մարմին(ներ) | Երեւանի քաղաքապետարանի սեփական միջոցներ | Ծրագրի ֆինանսավորում | 2.00 |
| **Ֆինանսավորման ընդհանուր գումարը** | | | **38.00** |

**Հավելված 3.**

**Վճարման պահանջագրի օրինակելի ձեւ**

**ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ**

**[ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՇԱՀԱՌՈՒԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՁԵՎԱԹՂԹԻ ՎՐԱ]**

**[Դրամաշնորհի շահառու եւ Իրականացնող մարմին]**

Ամսաթիվը՝ [●]

**Եվրոպական ներդրումային բանկ**

**Ուղղված՝** ***[կոնտակտային անձի անունը]***

*[համապատասխան Ծառայությունների անվանումները]*

98-100, Կոնրադ Ադենաուր բուլվար

L-2950, Լյուքսեմբուրգ

**Թեման՝** Հարեւանության ներդրումային ծրագրի շրջանակներում իրականացվող՝ ԵՐԵՎԱՆԻ ԷՆԵՐԳԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ II ՓՈՒԼԻ ԾՐԱԳԻՐ. Ներդրումային դրամաշնորհի համաձայնագիր FI թիվ [X]՝ թիվ [X] Օժանդակության համաձայնագրի շրջանակներում

Վճարման պահանջագրի համարը՝ [●]

Վճարման պահանջագրով ծածկվող ժամանակահատվածը՝ [●]

Հարգելի պարոն/տիկին,

Մենք հղում ենք կատարում չակերտներում նշված Դրամաշնորհի համաձայնագրին: Համաձայնագրի 7-րդ հոդվածի (*Դրամաշնորհի վճարումը*) համաձայն՝ սույնով խնդրում ենք տրամադրել վերը նշված Համաձայնագրի շրջանակներում թիվ [●] վճարումը, որով ծածկվելու են այն Աշխատանքների ծախսերը, որոնք ակնկալվում է, որ կիանձնվեն [ ]-ից [ ]-ն ընկած ժամանակահատվածում:

Պահանջվող գումարը [եվրո] է [Խնդրում ենք նշել կիրառված Տարադրամի փոխարժեքը]

Կից ներկայացվում են հետեւյալ օժանդակ փաստաթղթերը.

[Կապալառուի անվանումը]-ի կողմից [ ] ամսաթվին տրված հաշիվ-ապրանքագիր թիվ [●]

[7-րդ հոդվածի (*Դրամաշնորհի վճարումը*) համաձայն պահանջված ցանկացած այլ փաստաթուղթ]

Վճարումը պետք է կատարվի հետեւյալ բանկային հաշվին՝... [•]

Սույնով հավաստում ենք, որ սույն վճարման պահանջագրում եւ կից ներկայացված օժանդակ փաստաթղթերում առկա տեղեկություններն ամբողջական են, հավաստի եւ ճիշտ, որ կրած ծախսերը կարող են համարվել թույլատրելի՝ սույն Համաձայնագրին եւ Պայմանագրերին համապատասխան, եւ որ սույն վճարման պահանջագիրը հիմնավորված է համապատասխան օժանդակ փաստաթղթերով, որոնք կարող են ստուգվել:

Հավաստում ենք նաեւ, որ Համաձայնագրի 7-րդ հոդվածում (*Դրամաշնորհի վճարումը*) նշված պայմանները շարունակում են բավարարված լինել:

[Վերջին տրանշի վճարման պահանջագրի դեպքում. Պարտավորվում ենք Կատարման ժամանակահատվածի ավարտից հետո՝ երեսուն (30) օրացուցային օրվա ընթացքում, Բանկին տրամադրել բոլոր օժանդակ ապացույցներն ու փաստաթղթերը, որոնցով հիմնավորվում են սույն վճարման պահանջագրով

ծածկվող ծախսերի չափը եւ թույլատրելիությունը՝ Դրամաշնորհի վերջնական չափը պարզելու նպատակով:]

Հարգանքով՝

*Պատշաճ կերպով լիազորված ստորագրողների ստորագրությունները*

_______________________________________________
Անուն՝

Պաշտոն՝

Ամսաթիվ՝

## Հավելված 4.

## Հաշվետվությունները

8.3 հոդվածի (*Թույլատրելի ծախսերը*) առնչությամբ Հաշվետվությունները պետք է համապատասխան դեպքերում ներառեն՝

1) 9-րդ հոդվածում (*Տեղեկատվություն եւ հաշվետվություններ ներկայացնելը*) նշված տարեկան կտրվածքով ներկայացվող՝ առաջընթացի վերաբերյալ հաշվետվությունները եւ իրականացման վերաբերյալ վերջնական հաշվետվությունը,

2) Վերջնական շահառուի հաշվապահական համակարգից հաշվապահական հաշվետվությունները (համակարգչայնացված կամ ձեռքով կազմված), ինչպիսիք են գլխավոր հաշվառման մատյանը, ենթամատյանները եւ աշխատավարձերի հաշիվները, հիմնական ակտիվների գրանցամատյանները եւ այլ վերաբերելի հաշվապահական տեղեկություններ,

3) Իրականացված գնումների ընթացակարգերի մասով ապացույցները, ինչպիսիք են մրցութային փաստաթղթերը, մրցույթի մասնակիցների կողմից ներկայացված առաջարկները եւ գնահատման հաշվետվությունները, այդ թվում՝ 5-րդ հոդվածին (*Նախագծումը եւ գնումները*) համապատասխան պահանջվող՝ Բանկի կողմից «առարկություններ չլինելը» կամ համաձայնություն տալը հաստատող ցանկացած ապացույց,

4) Իրավական պարտավորությունների մասով ապացույցները, ինչպես օրինակ՝ Պայմանագրերը,

5) Աշխատանքների հանձնման մասով ապացույցները, ինչպիսիք են հաստատված հաշվետվությունները, ժամանակացույցները, ուղետոմսերը, սեմինարներին, համաժողովներին եւ վերապատրաստման դասընթացներին հաճախելու ապացույցները (այդ թվում՝ վերաբերելի փաստաթղթեր, ձեռք բերված նյութեր, վկայականներ) եւ այլն,

6) Գնումների մասով ապացույցները, ինչպիսիք են հաշիվ-ապրանքագրերը եւ ստացականները,

7) Վճարման ապացույցները, ինչպիսիք են բանկային քաղվածքները, դեբետային ավիզոն, Կապալառուի կողմից վճարումն ընդունելու մասին ապացույցը,

8) Ապացույցներ առ այն, որ վճարված հարկերը եւ (կամ) ԱԱՀ-ն փաստացիորեն չեն կարող հետ պահանջվել:

Բոլոր հաշվետվությունները պետք է ներկայացվեն կա՛մ բնօրինակով, այդ թվում՝ էլեկտրոնային ձեւով, կա՛մ վավերացված պատճենների ձեւով:

## Հավելված 5.

## Առաջընթացը բնորոշող ցուցանիշներ

Բանկի կողմից Ծրագրի մակարդակում մոնիթորինգի ենթակա հիմնական ցուցանիշները հետևյալն են.

| **Ակնկալվող արդյունքներ** | | | | | |
|---|---|---|---|---|---|
| **Ցուցանիշ** | **Միավոր** | **Ելակետային նշանակություն (X)** | **Ծրագրից հետո ակնկալվող նշանակություն (Y)** | **Ակնկալվող արդյունք (=Y-X)** | **Կիրառված մեթոդաբանության վերաբերյալ արված մեկնաբանություններ եւ հղումներ՝ առկայության դեպքում** |
| | | *2019* | *2026* | | |
| **Ստանդարտ վերջնարդյունքներ** | | | | | |
| Վերանորոգված շենքեր | # | 0 | 38 | 38 | |
| Էներգաարդյունավետության պահանջները բավարարող վերանորոգված շենքերի մակերես | մ² | 0 | ~109,278.30 | ~109,278.30 | |
| **Ստանդարտ արդյունքներ** | | | | | |
| Էներգախնայողություն (վերջնական) | ՄՎտժ | 0 | 14,456 | 14,456 | Տարեկան կտրվածքով |
| Վերականգնվող էներգիայի աղբյուրներից արտադրված էլեկտրականություն | ԳՎտժ/տար | 0 | ~1 | ~1 | |
| **Ծրագրային ցուցանիշներ** | | | | | |
| CO2 խնայողություններ | tCO2/a | 0 | 3,300 | 3,300 | |
| **Միջոլորտային ցուցանիշներ** *(պարտադիր է, եթե դրանք հիմնական նպատակներն են, տե՛ս 19-րդ վանդակը)* | | | | | |
| Շահառուների ընդհանուր թիվը | # | 0 | **Մանկապարտեզներ՝**<br>6,208 սան<br>անձնակազմի 895 անդամ<br>**Պոլիկլինիկաներ՝**<br>Այցելու/մեկ տարում՝ 358,488<br>Անձնակազմի անդամներ՝ 696<br>**Հիվանդանոց՝**<br>Հիվանդանոց տեղափոխված անձ/մեկ տարում՝ 12,660<br>Անձնակազմի անդամներ՝ 505 | **Մանկապարտեզներ՝**<br>6,208 սան<br>անձնակազմի 895 անդամ<br>**Պոլիկլինիկաներ՝**<br>Այցելու/մեկ տարում՝ 358,488<br>Անձնակազմի անդամներ՝ 696<br>**Հիվանդանոց՝**<br>Հիվանդանոց տեղափոխված անձ/մեկ տարում՝ 12,660<br>Անձնակազմի անդամներ՝ 505 | |
| Մշտական զբաղվածություն. Շինարարության փուլ | # (ԼԴՀ) [լրիվ դրույքին | 0 | 814* | 814 | Մշտական զբաղվածություն. Շինարարության փուլ |

| **Ակնկալվող արդյունքներ** | | | | | |
|---|---|---|---|---|---|
| **Ցուցանիշ** | **Միավոր** | **Ելակետային նշանակություն (X)** | **Ծրագրից հետո ակնկալվող նշանակություն (Y)** | **Ակնկալվող արդյունք (=Y-X)** | **Կիրառված մեթոդաբանության վերաբերյալ արված մեկնաբանություններ եւ հղումներ՝ առկայության դեպքում** |
| | | *2019* | *2026* | | |
| | համարժեք] | | | | |

** Հաշվարկվում է որպես 22 աշխատանք՝ տարեկան/ 1 միլիոն ներդրում:*